ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ՝ ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՌՈՅԹ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ
tigranhayazn@mail.ru

ՄՈՒՏՔ

Ամուսնութեան փաստը հազարամեակներ շարունակ եղել է պետականաշինութեան լրջագոյն գործիք: Ամուսնական կապերի հաստատման ճանապարհով լուծուել են շատ խնդիրներ, կարգաւորուել պետութիւնների, իշխող ընտանիքների յարաբերութիւններ: Այն իր նպատակների իրագործման համար լաւագոյնս օգտագործել է ԺԲ. դարի հայ խոշորագոյն ռազմական, քաղաքական գործիչ, Հայաստանի 1185-87ի թագաւոր Զաքարէ Ա.ի որդի Սարգիս Բ. Մեծը: Նրա կազմակերպած ամուսնութիւնների արդիւնքում ստեղծուել է ապագայ պետականութեան հիմնատարածք: Շուրջ 150 տարի Սարգիս Բ. Մեծի ամուսնութիւններ կազմակերպելու միտումը կիրառուել է թէ՛ Հայք-Հայաստանի 1187-1236ի բացարձակ անկախութեան, թէ՛ 1236-1350ականների մոնղոլական տիրապետութեան կիսանկախ գործունէութեան շրջանում: Սարգիս Բ. Մեծի մօտեցումները 5-6 սերունդ կենսունակ արդիւնաւէտութեամբ ծառայել են Հայք-Հայաստանի իշխանական տների գոյատեւման գործին:

Այստեղ մենք լուսարձակի տակ կ'առնենք վերոյիշեալ ամուսնութիւնների պարագան եւ դրանց հետեւանքով հայ իշխանական տների մերձեցման եւ պետականութեանը սատարելու փաստը:

ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՃԻՒՂ

1160ականներին դառնալով հօր՝ Վիրքի զօրաբանակի կազմում ձեւաւորուած հայկական բանակի հրամանատար, Զաքարեան տոհմի հիմնադիր Զաքարէ Ա.ի օգնականը, ապա հրամանատարի պաշտօնում փոխարինելով նրան, Սարգիս Բ. Զաքարեանը, հայկական կիսանկախ իշխանաւորների շրջանում իր քաղաքական դերն ու ազդեցութիւնը ամրապնդելու նպատակով, օգտուել է ամուսնութեան ընձեռած հնարաւորութիւններից՝ իրեն եւ իրար կապելով Հիւսիսային Հայաստանում իրենց անկախ կամ կիսանկախ գոյութիւնը պահպանած հայկական իշխանական տների ներկայացուցիչներին:

Առաջին քայլով Սարգիս Ա.ն բարեկամական-խնամիական կապ հաստատեց Արծրունի իշխանական տոհմի հետ: Թէ՛ հայրը՝ Զաքարէ Ա.ն, թէ՛ որդին՝ Սարգիս Բ.ն զինուորականներ էին: Քաղաքական ասպարէզ մտնելու, ազդեցութիւն ձեռք բերելու համար նրանք պէտք է ազդեցիկ շրջապատ ստեղծէին: Այդ ժամանակներում իրենք Վիրքի բանակի հրամանատար Իւանէ Օրբէլեանի օգնական-վասալներն էին: Մէկ քայլով

նրանցից առաջ էին անցել Մահկանաբերդի, Կայէնի, Հաղբատի տէր Արծրունիները, որոնք վասալի կարգավիճակից բարձրացել եւ ուղիղ Վիրքի թագաւորի վասալներ էին դարձել եւ զբաղեցնում էին Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնը[1]:

Այդ ընտանիքի հետ բարեկամութիւնը կարող էր օգտակար լինել Զաքարեանների առաջխաղացման համար:

Սարգիս Բ.ն խնդրել է Թիֆլիսի նախկին քաղաքապետ Վահրամ Արծրունու դստեր, Թիֆլիսի քաղաքապետ Ամիր Վասակ Արծրունու քրոջ՝ Սահակդուխտ իշխանուհու ձեռքը: Սահակդուխտ իշխանուհու/թագուհու անունը առաջին անգամ փորագրուել է Հոռոմայրում Սարգիս Բ. Մեծի մահուան տարում՝ 1187ին, նրա յիշատակին, որդիների՝ Զաքարէ Բ.ի եւ Իւանէ Ա.ի կառուցած Ս. Նշան կամ Սպասալարների եկեղեցու հարաւային մատուռ տանող մուտքի բարաւորին. «*Ի թուին ՈԼՋ /1187/: ... Ես՝ ամիրսպասալար Զաքարէ, եւ Իւանէ, շինեցաք զեկեղեցիս, տուաք զԾենուկ սուրբ Նշանիս, վասն մեր յերկար կենդանութեան եւ մեր ծնողացն հոգոյն առնեն ժամ :Բ:/2/ աւր Զատկին ամիրսպասալար Սարգսի, :Բ:/2/ աւր Յայտնութեան Սանդխտոյ*»[2]: Արձանագրութեան հրատարակողները ծանօթագրութեան մէջ նշել են որ այդ թուականին մահացած ամուսիններին հոգու համար է կառուցուել եկեղեցին: Այդ թում նաեւ մօր հոգու համար: Նման բան չէր կարող լինել, քանի որ 1187ին մահացել է միայն Սարգիս Բ.ն: Անիի միջնաբերդում որդու՝ Զաքարէ Բ.ի կառուցած եկեղեցում թագուհու անունից փորագրուել է. «*Սուրբ եւ մեղսաքաւիչ պատարագն, որ սմա կատարի, Սահակդխտո է, ծնաւղի Զաքարէա եւ Իւանէի՝ թագաւորաց Հա/յ/ոց*»[3]: Իսկ յայտնի է, որ Անին ազատագրուել է 1199ին միայն, եկեղեցին կառուցելու համար եւս միքանի տարի էր անհրաժեշտ: Այսինքն առնուազն մինչեւ 1204/05 Սահակդուխտ թագուհին դեռեւս ապրել է:

Սարգիս Բ. Մեծ եւ Սահակդուխտ իշխանուհու ամուսնութիւնը եղել է արգասաբեր: Սահակդուխտը ծնել է երկու որդի, չորս կամ հինգ դուստր:

Հեռատես Սարգիս Բ.ն իւրովի է որոշել դուստրերի ճակատագիրը:

1170ականներին Արցախ աշխարհի Ծար գաւառում, Վերին Խաչէնում, Ներքին Խաչէնում որոշակի անկախութիւն էին պահպանել հինաւուրց Առանշահիկ թագաւորների շառաւիղները, որոնցից Հաթերքի եւ Խոխանաբերդի տէրերը՝ Վախթանգ Սակռեանը եւ Վախթանգ Տանգիկը իրենց թագաւորներ էին կոչում, Ծարի տէրը՝ գահերէց իշխան: Նրանց հետ բարեկամութիւնը կարող էր շահեկան լինել:

Սարգիս Բ.ն դուստրերից Դոփին կնութեան է տուել Ծարի գահերէց իշխան Հասան Ա.ին: Այս ամուսնութիւնից ծնուել են Գրիգորիսը (ԺԳ. դարասկզբին Հաղբատի եպիսկոպոս եւ առաջնորդ)[4], Յովհաննէսը (Հաղբատի, ապա՝ Սանահինի եպիսկոպոս եւ առաջնորդ, կառուցել է Հաղբատի եւ Սանահինի սահմանում գտնուող Կայան բերդը)[5], Գրիգոր Մեծ իշխանը[6]: Հասան Ա.ն վաղ է մահացել եւ մինչեւ Գրիգոր որդու չափահաս

դառնալը, երկրամասի գահերէց իշխանի գահը, Զաքարէ Բ. շահնշահի հրամանով տնօրինել է Դոփ իշխանուհին: 1214ին մահացել է Վերին Խաչէնի տիրակալ Վախթանգ Հաթերքցին: Նրա արու ժառանգներն աւելի վաղ մահացել էին: Թէեւ Վախթանգ Հաթերքցու եղբայրների որդիներն ապրում էին, բայց իշխանութեան գահը մնացել է թափուր: Փոխադարձ համաձայնութեամբ, խաղաղ ճանապարհով, Զաքարէ Բ. շահնշահին 1213ին հայոց գահի վրայ փոխարինած Իւանէ Ա.ն, Հաթերքի իշխանութեան մի մասը կցել է քրոջ՝ Դոփի Ծարի իշխանութեանը[7]: Հայոց պատմութեան մէջ եզակի է այս ամուսնութեան արգասիքը՝ Դոփի անունով տոհմն անուանակոչուել է Դոփեանք[8]: Գահի վրայ մօրը փոխարինել է չափահաս դարձած որդին՝ Գրիգոր Մեծ իշխանը: Դոփ իշխանուհու շինարարական աչքի ընկնող ձեռնարկը Խադա վանքի մատուռն է: Խադա վանքի հիմնական եկեղեցին կառուցել է նրա տեգրը՝ Յովհաննէս եպիսկոպոսը: 1226ին Դոփ իշխանուհին Յովհաննէսի կառուցած եկեղեցու հիւսիսային պատին, արեւելեան հատուածում կիսով եկեղեցու մէջ մտած մատուռ է կառուցել, որն իր արձանագրութեան մէջ անուանել է գաւիթ: Դոփ իշխանուհին իր արձանագրութեամբ յայտնում է. «*Թուին ՌՀԴ /1226/: Ես՝ Դոփս, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի եւ Իվանէի, շինեցի զգաւիթս եկեղեցոյս եւ զմատուռս*»[9]: Կեանքի վերջին տարիներին Դոփ իշխանուհին փոխադրուել է Հաղբատ, մահացել եւ թաղուել է տեգրոջ կառուցած մեծ գաւթում: Աւելի ուշ նրա կողքին յուղարկաւորուել է որդին՝ Յովհաննէս եպիսկոպոսը: Իշխանուհու տապանաքարին փորագրուած է. «*Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դաւին*»[10]:

Սարգիս Բ.ն յաջորդ դստերը՝ Խորիշահին, ամուսնացրել է Ներքին Խաչէնի տիրակալ Վախթանգ Տանգիկի հետ: Այս ամուսնութիւնից ծնուել են Հասան-Ջալալ, Զաքարէ, Իւանէ, Նասր Դոլա որդիները եւ երեք դուստրեր: 1212ին բացառապէս Խորիշահի նպաստաւորմամբ կառուցուել է Մեծառանք գաւառի եպիսկոպանիստ Սուրբ Յակոբայ եկեղեցին: Եկեղեցու մուտքի բարաւորին Խորիշահ իշխանուհու հրամանով փորագրուել է. «*ՈԿԱ /1212/ թիւ: Ես՝ Խորիշահ, ամուսին Վախտանգա, տ/է/ր Խաչէնոյ, դուստր Մեծին Սարգսի, քոյր Զաքարի եւ Իւանոյ, վերստին շինեցի զեկեղեցին Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս զաւակաց իմոց... զՎախտանգ եւ զիս յաղաւթս յիշեցէք*»[11]: Եկեղեցու կառուցման առթիւ ամուսինները պատուիրել եւ ստացել են շքեղ, 311 մագաղաթեայ թերթի վրայ շարադրուած Աւետարան, որի յիշատակարանում գրուել է. «*... հրամանաւ եւ ծախիւք բարեսէր եւ աստուածահաճոյ առն Վախտանգա՝ որդւոյ Հասանա՝ որդւոյ Վախտանգա եւ քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի*»[12]: 1214ին Տանգիկը մահացել է: Գահը կտակի համաձայն անցել է նրա կնոջն ու պատանի որդուն՝ Հասան-Ջալալ Դոլոյին: 1216ին, մօր օգնութեամբ, Հասան-Ջալալն սկսել է Գանձասարի կաթողիկէ եկեղեցու կառուցումը: Այդ տարի-

ներին Խորիշահ իշխանուհին ամուսնացրել է երեք որդիներին: Երբ շինարարութիւնն հասել է արեւելեան պատուհաններին, մօտաւորապէս 1220ականների սկզբներին, իշխանուհին երրորդ անգամ ճգնելու է գնացել Երուսաղէմ: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրել է. «... *չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ եւ զամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ՝ զարմացուցանէր զամենայն տեսողսն եւ զլսողսն քանզի ծախեալ զամենայն գոյս իւր՝ զոր ունէր, յաղքատս եւ ի կարօտեալս՝ նման Հեղինէի, կնոջն Աբգարու, եւ ինքն ձեռագործաւ իւրով կերակրէր: Եւ անդէն մեռաւ...*»[13]:

Սարգիս Բ. Մեծը կենդանութեան օրօք ամուսնացրել է նաեւ Նրջիս անունով դստերը: Նրան տուել է Դսեղի տէրերից Համազասպեան-Մամիկոնեան իշխանական տան պայազատներից մէկին: Թէեւ աղբիւրներում որեւէ ակնարկ չկայ Նրջիսի ամուսնու անձի մասին, սակայն Համազասպեան-Մամիկոնեան իշխանատան տոհմածառը կազմելիս մենք կարծիք ենք յայտնել, որ նա եղել Սադուն իշխանի կինը[14]: Ամուսնու անուան բացակայութիւնը կարող է երկու պատճառ ունենալ: Կա՛մ Նրջիսի ամուսինը վաղ է մահացել եւ մոռացութեան մատնուել, կա՛մ էլ Նրջիսի ամլութիւնը, որի հետեւանքով նա հեռացել է ամուսնուց:

Նրջիսի մասին տեղեկացնող արձանագրութիւնները երկու տարեթիւ ունեն, երկուսը փորագրուել են 1223ին, երեքը՝ տասներկու տարի անց՝ 1235ին: 1223 թուակիր արձանագրութիւններից մէկը փորագրուել է Լոռու մարզի Թումանեանի տարածաշրջանի Իգահատ բնակատեղի մօտ գտնուող Գողգոթավանքի եկեղեցում, միւսը՝ Գողգոթավանքի եւ Քոբայրավանքի միջեւ գտնուող բարձունքին տեղադրուած խաչքարի ճակատամասում եւ պատուանդանի երեսին: Գողգոթավանքի եկեղեցու արձանագրութիւնն այսպիսին է. «*Ի թուին ՈՀԲ /1223/: Ես՝ Նրջիս, որդիացեալս Մամքանա, դուստր մեծին Սարքսի զսուրբ առաշդէն զուգեցի եւ եկեղեցիս սալեցի, եւ աւրհնեցի, որք երկրպագէք՝ յիշեցէք ի տէր զիս եւ զիմոնց: Եւ զինչ ի սիկելին գրած է՝ էթողած գեղիս հարկ իմանոց աղիս...*»[15]: Քոբայրավանքի ճանապարհի խաչքարի պատուանդանին փորագրուած է. «*Ի թուիս ՈՀԲ /1223/: Ես՝ Գրիգոր, սնուցած եւ մեղուցեաց աւագ դստէր Մեծին Սարգսի պատրոն Նրջսին, սնունդ թագուհոյն Մամքանա, կանգնեցի զՍուրբ Երրորդութիւնս ողորմութեամբն պատրոնին յիշատակ հոգոյ իմոյ, եղբարց եւ քուեր իմոյ Բանուշահի կրաւնաւորի*»[16]: 1235ի արձանագրութիւններից երկուսը փորագրուել են Հառիճի վանքի գաւթի ներսում, հիւսիսային պատի վրայ մէկը՝ Գօշավանքի Աստուածածին եկեղեցու ներսում, հիւսիսային պատի վրայ: Հառիճում փորագրուել է. «*Ես՝ Գրիգոր, սնուցած Մեծին Սարգսի դստէրն Նրջիսին, փուի Աւետարան զուգաւք ի ս/ուր/բ եկեղէցիս ողորմութեամբ պարոնին իմո... Ի թվիս ՈՁԴ (1235)*»[17]: Նոյն արձանագրութեան տակ փորագրուած է. «*Ես՝ Արսէն, սնուցած պարոն Նրջիսին ընծաեաց արդիւնք ի ս/ուր/բ ուխտս*»[18]: Գօշավանքում փո-

ռագրուած է. «*Ես՝ մեղուցեալ աղախին Քրիստոսի Ազիզ՝ պաշտաւնեա Նրջսին, միաբանեցա ի ս/ուր/բ Ս/սպուածա/ծինս*»[19]: Գողգոթավանքի եկեղեցու արձանագրութիւնը յուշում է, որ Նրջիսը սիկիլով[20] նշանակուել է տուեալ տարածքի կառավարիչ, ունեցել է հարկեր գիջելու իրաւասութիւն, ինչն էլ արել է: Նման պաշտօնի հրամանագիր Նրջիսին ամենայն հաւանականութեամբ տուել է Զաքարէ Բ.ին գահի վրայ յաջորդած որդին՝ Շահնշահ Ա.ն: Փաստօրէն Նրջիսը որպէս սեփականատէր-կառավարիչ կեանքը շարունակել է որպէս պատրոն/պարօն, ունեցել է սնուցեալ անձինք եւ պաշտօնեաներ: Հառիճի եւ Գօշավանքի արձանագրութիւնները փորագրուել են 1235ին: Հետեւում է, որ նուազագոյնը մինչեւ այդ նա ապրել է: Կեանքի վերջին տարիներին ճգնաւորել է Սանահինի վանական համալիրում: Մահացել եւ թաղուել է Սանահինի գրատան նախագաւթում: Տապանաքարին փորագրուած է. «*Ճգնաւորն պատրոն Նրջիսն է, քոյր պարոնացն Զաքարէի եւ Իւանէի*»[21]:

Սարգիս Բ. Մեծը մահացել է 1187ին եւ այլեւս չէր կարող ամուսնացնել չորրորդ դստերը՝ Վանենի-Նանային: Վերջինիս ամուսնացրել են եղբայրները՝ հօրը՝ Սարգիս Բ.ին հայոց բանակի ամիրսպասալարի պաշտօնում փոխարինած Զաքարէ Բ.ն եւ եղբայրը՝ Իւանէ Ա.ն: Նրանք 15ամեայ Վանենուն, հօր մահից մէկուկէս-երկու տարի յետոյ ամուսնացրել են Մածնաբերդում ծուարած Կիւրիկեան թագաւորական տան գահակալ, Կիւրիկէ Գ.ի որդի, 17ամեայ Աբաս Բ. թագաւորի հետ: Գանձակեցին գրել է. «*Սա (Աբասը – Տ.Պ.) առնու իւր կին զդուստր Սարգսի բարեպաշտ իշխանի... քոյր մեծամեծ իշխանացն Զաքարէի եւ Իւանէի, Նանայ անուն*»[22]: Երկու տարի անց, 1192ին, Աբաս Բ. թագաւորը, 19 տարեկան հասակում, հոգին աւանդել է: Նրան յուղարկաւորել են Հաղբատի վանքի մեծ գաւթի տոհմական տապանատանը՝ հօր կողքին[23]: Վանենին, ամենայն հաւանականութեամբ, վերադարձել է հայրական տուն՝ Լօռէ Բերդ եւ, ինքնուրոյն կամ եղբայրների հետ գործակցելով, զբաղուել է շինարարական աշխատանքով, բարեգործութեամբ:

1192ին Վանենին, վաղամեռ ամուսնու յիշատակին, սեփական միջոցներով կառուցել է Սանահինի միաթռիչք մեծ կամուրջը: Կամուրջը տեղադրուած է Դեբէդ գետի նեղ եւ նպաստաւոր, ժայռեղէն ափեր ունեցող հատուածում: Այն ունի կիսաշրջանաձեւ կամար՝ 18,6 մետր բացուածքով եւ ամենամեծ թռիչք ունեցող պահպանուած կամուրջներից մէկն է: Կամուրջը գործում է առ այսօր: Թագուհու հրամանով կամուրջի կողքին կանգնեցուել է խաչքար, որի թիկունքին արձանագուել է. «*[Աստծոյ զօրութեամբ: Ի տէրութեան][24] ազգին Բագրատունեաց, ես՝ Վանենի, դուստր իշխանաց իշխանն Սարգսի, որդո Զաքարէի, կին Աբաս թագաւորի, որ կիսաւրե վախճանեալ խաւարեցոյց զմեզ, շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ միսիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց...*»[25]: 1197ին Վանենին գործակցել է եղբօր՝ Իւանէ

Ա.ի հետ Մորոյ Ձորոյ վանքի կառուցման ժամանակ: Արձանագրութիւնը կազմուել է Վանենու անունից. «*Ի թուին ՈԽՁ /1197/: Ի ժամանակ/ի/ երկուց եղբարց՝ Զաքարէ եւ Իւանէ, շինեաց Իւանէ զվանքս Մորո Ձորո: Եւ ես՝ Նանա, կամակից եւ աւգնական եղէ Ա/ստուա/ծածնիս եւ միաբանեցա ս/ուր/բ ուխտիս*»[26]: Վանենի-Նանայի անունը կապւում է նաեւ Այրարատի կողմնակալութեան-փոխարքայութեան հոգեւոր կենտրոն Յովհաննավանքի հետ: Վանենի-Նանան որդեգրել է Յովհաննավանքի երիտասարդ վարդապետերից մէկին՝ Մարգարէին: Վերջինիս միջնորդութեամբ նա հովանաւորել է վանքի շրջապարսպի կառուցումը, որը ղեկավարել է ինքը՝ Մարգարէն: Սակայն Վանենի-Նանային վիճակուած չէր վայելել նաեւ որդեգիր հոգեզաւակի քաղցրութիւնը: Պարսպի կառուցման ընթացքում մահացել է Մարգարէն: Վանենի-Նանան Մարգարէի գերեզմանին գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել: Թէեւ խաչքարը կոտորակուել, հիմնականում ոչնչացել է, արձանագրութիւնը ԺԷ. դարում արտագրել ու փրկել է պատմիչ Զաքարիա Սարկաւագը. «... *ես՝ Նանայս, դուստր մեծ ռապետին*[27] *Սարգսի, որդոյ Զաքարէի, որդոյ աւագ Սարգսի, կանգնեցի ի վերա նորակերտ վարդապետիս Մարգարէի, որ սկիզբն յաշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ եւ առաւել եղեւ քան զծնունդ որովայնի... տեսեալ զյոժարութիւն սրտի նորա, անկայ ի շինութիւն պարսպին՝ նորա առաջնութեամբ: Եւ մինչ նա յայս բարւոյ գործոյս վերակացութեան էր, մերձեցաւ կատարած կենաց նորա, եւ ի հող էջ մանկահասակ...*»[28]: Այս որդեգրումն ու պարսպի շինարարութիւնը կարող էին տեղի ունենալ 1217ի մերձակայ տարիներին, քանի որ այդ թուականին է աւարտուել Յովհաննավանքի Կաթողիկէի կառուցումը: Որքանով են Վանենին եւ Նանան նոյն անձը՝ դժուար է ասել, որեւէ դէպքում դրանցից մէկը գրելիս չի նշուել, որ միւսի հետ նոյնն է, ինչպէս օրինակ բազմիցս իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանի որդու՝ Հասանի մասին նշուել է. «...*Հասան՝ երկանուն Պռաւշ*»[29]:

Պատմաբան Արտաշէս Շահնազարեանը կարծիք է յայտնել, որ «*Ըստ երեւոյթին մեծ Սարգիսն ունէր նաեւ Թամթա անունով մի այլ դուստր, որին պատկանում էր Ալիաբադ բերդը*»[30]: Այն գտնուել է Լոռէ բերդի մօտակայքում: Այսպէս, 1225ին Տփղիս արշաւող խորեզմշահ Մուհամմադի որդի Ջալալ ադ-Դինը կտրել է Փամբակի լեռնաշղթան, շրջանցել Լոռէ եւ Ալիաբադ բերդերը (վերջինս փրկագնուել է) եւ անցել Տփղիս: 1229ին Ջալալ ադ-Դինը, Խլաթի արշաւանքից վերադառնալով, արշաւել է Շաքքան բերդ, աւերել, այրել է այն եւ այդտեղից անցել Թամթա թագուհու Ալիաբադ բերդը: Այն արագ գրաւել է, կոտորել բնակիչներին, ապա գնացել Գագ եւ Քաւազին բերդերը: Թամթան[31] իր թագուհի կոչումով իրօք կարող է լինել Սարգիս Բ. Մեծի դուստրը: Սակայն փաստական նիւթի բացակայութիւնը հնարաւորութիւն չի տալիս ճշտելու թէ ով է եղել Ալիաբադ բերդի իշխանաւոր տէրը, որ նրա կինը՝ Թամթան թագուհի է

անուանուած: Թամթա անունը հաւանաբար եղել է Սարգիս Բ. Մեծի ընտանիքում, քանի որ այդ անունով է ներկայացուել Ներքին Խաչէնի Վախթանգ ինքնակալի կին Խորիշահը[32]: Թամթա անունով քոյր ունենալու հաւանականութեան օգտին է խօսում նաեւ այն, որ Իւանէ Ա.ն, հաւանական քրոջ պատուին, այդ անունով է կոչել իր դստերը[33]:

Եթէ Սարգիս Բ. Մեծի դուստրերի հարցում կայ որոշակի տեղեկատուութիւն, որը հնարաւորութիւն է տալիս գծել նրանց պատմութեան յետագիծը, ապա նոյնը հնարաւոր չէ ասել երկու որդիների՝ ապագայ հայոց շահնշահ, Հայաստանի եւ Վիրքի միասնական պետութեան ամիրսպասալար եւ մանդատուրթախուցէս Զաքարէ Բ. Մեծի եւ եղբօր, Հայաստանի եւ Վիրքի միասնական պետութեան ապագայ աթաբէկ Իւանէ Ա.ի մասին:

Զաքարէ Բ.ն 1187ին, 23 տարեկան հասակում, հօր մահից յետոյ, փոխարինել է նրան հայոց «թագաւորի» ձեւական պաշտօնում, որ Թամար թագուհու կողմից Լոռու տարածքում շնորհուել էր Սարգիս Բ.ին: Զաքարէ Բ.ն ձեւական անկախութիւնը դարձրեց բացարձակ պաշտօնական անկախութիւն: Նա Լոռու եւ յարակից տարածքները հիմք դարձնելով՝ Մերձաւոր Արեւելքում ձեւաւորեց հզօր պետական միաւորում Հայք-Հայաստան անունով: Նա Հայք-Հայաստանի բանակի գլուխ անցած, մինչեւ իր մահը՝ 1213ը, հարեւան՝ Մերձաւոր Արեւելքի բոլոր աւելի հզօր պետութիւնների դէմ պատերազմել եւ յաղթել է: Ամբողջ 26 տարի Զաքարէ Բ.ի կողքին եղել ու նրան օգնել է կրտսեր եղբայրը Իւանէ Ա.ն: Այդպիսի եղբայրութեան օրինակ մեր պատմութեան մէջ հազուադէպ է:

Եղբայրների ամուսնութիւնը եղել է հօր՝ Սարգիս Մեծի մահից յետոյ, ամենայն հաւանականութեամբ Անբերդի ազատագրման տարում՝ 1196ին[34]:

Որեւէ տեղեկութիւն չկայ Զաքարէ Բ. Մեծի կողակցի մասին: Միայն յայտնի է, որ նա Սասնոյ իշխանի դուստրն է: 1197ին այս ամուսնութիւնից ծնուել է հայոց Զաքարէ Բ. շահնշահի միակ որդին՝ Սարգիսը:

Իւանէ Բ.ի կնոջ մասին մի փոքր աւելի տեղեկութիւն կայ: Նրա կնոջ անունը յայտնի է՝ Խոշաք: Սակայն Խոշաքի տոհմական ծագման մասին նոյնպէս ոչինչ յայտնի չէ: Հաւանաբար նոյն տարում, ինչ Զաքարէ Բ. Մեծի կինը, Խոշաքը զոյգ զաւակ է ունեցել՝ տղայ եւ աղջիկ: Տղան ստացել է Սարգիս, աղջիկը՝ Թամթա անունը:

Ամենայն հաւանականութեամբ ամիսներով աւելի վաղ ծնուել է Իւանէ Բ.ի որդի Սարգիսը: Ու որպէսզի երկու եղբայրների Սարգիս որդիներին ապագայում իրարից զանազանեն, Իւանէ Բ.ի որդին, որ ամիսներով վաղ է ծնուել անուանակոչուել է Աւագ, Զաքարէ Բ.ի որդին, որ ամիսներով ուշ է ծնուել, հօր «շահնշահ» կոչման համապատասխան ստացել է Շահնշահ փաղաքշական անունը: Յետագայում երկու եղբօրորդիների Սարգիս անունները մոռացուել են. նրանք Աւագ եւ Շահնշահ անուններով են գործել պատմական ժամանակահատուածում:

Որքան էլ Խոշաքի տոհմական ծագումն անյայտ է, այնուամենայնիւ գործունէութեան մանրամասներն են յայտնի: 1214ին Վասակ Խաղբակեանը կառուցել է Կեչառիսի Կաթողիկէ եկեղեցին, որի արեւմտեան դռան բարաւորին փորագրուել է. «*Ես՝ Վասակ, որդի Խաղբակա շինեցի զսուրբ Կաթուղիկէս յաւգնութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ աթաբակի եւ արեան հարազատի իւրոյ Շահանշահի եւ Աւագին եւ իւր մատն պատրոն*[35] *Խոշաքին*»[36]: 1228ին եւ 1231ին Հայք-Հայաստանի գահակալ-թագաւոր Իւանէ Ա.ն իր եւ կնոջ անունից հարկային առանձնաշնորհներ է կատարել Շիրակաւան (Երազգաւոս) գիւղի քահանաներին, ձեռնաւորներին (արհեստաւորներին): Առաջին արձանագրութեան մէջ նշուել է. «*Ի թ. ՈՀԷ /1228/: ... Ես՝ Աթաբէկ Իւանէ եւ Խոշակս՝ Վրաց եւ Հայոց թագո/ւ/հի*[37], *վասն յերկար կենդանութեան հարազատաց մերոց մանդատորթախուցէս Շահնշահի եւ ամիրսպասալար Աւագին թողաք զգեղիս Շիրակա... բաժն*»[38]: Երկրորդ արձանագրութեան մէջ ասւում է. «*Ի թ. ՈՁ /1231/: ... ես՝ Աթաբակ Իւանէ եւ Խոշակս, վերայիշխող տանս Վրաց եւ Հա/յ/ոց եւ նովին թագո/ւ/հի վասն խնդրելոյ ի Քրիստոսէ Աստուծոյ մերո զբազում կենդանութիւն հարազատաց մերոց մանդատորթախուցէս Շահնշահի եւ ամիրսպասալար Աւագ ... ազատեցաք*»[39]: Նրջիս իշխանուհու դէպքում նշեցինք, որ նա կառավարչական իրաւունքներ է ունեցել եւ դրանով է պատճառաբանուել նրան պատրոն կոչելը: Հաւանաբար սեփականատիրական իրաւունքներ է ունեցել նաեւ Իւանէ Ա.ի կինը, որ պատրոն է կոչուել: Իւանէ Ա.ն մահացել է 1234ին: Խոշաք թագուհին երկար է ապրել: Նա կարեւոր դեր է ունեցել 1249ին վրաց իշխանների ապստամբութեան փորձի խնդրով մոնղոլների զայրոյթը մեղմելու գործում: Նա գնացել է մոնղոլների ղեկավար Չաղաթայի մօտ, երաշխաւորել որդու՝ Աւագի հաւատարմութիւնը մոնղոլներին[40]: Խոշաքը, ինչպէս որ ամուսինը՝ Իւանէ Ա.ն, քաղկեդոնական էր: Նա 1213ին, ստանձնելով Զաքարէ Բ.ի որդու՝ տասնվեցամեայ Շահնշահի խնամակալութիւնը, նրան եւս «... *դարձոյց յաղանդն Քաղկեդոնի*»[41]: Խոշաքի անունը վերջին անգամ յիշուել է Զաքարէ Բ.ի որդի Շահնշահ Ա.ի Յովհաննավանքի գաւթի արեւմտեան մուտքի ճակատին փորագրուած արձանագրութեան մէջ. «*Ի թվիս ՉԷ /1258/: ... այս իմ հրաման եւ արձան սահմանի Շահնշահ մանդատորթայխուցեսի, որդոյ Զաքարիայի ամիրսպասալարի Հայոց մեծաց եւ Վրաց... յիշատակ հոգոյ իմ եւ Խոշաքին*»[42]: Ամենայն հաւանականութեամբ Շահնշահ Ա.ն Խոշաքի անունը յիշատակել է, քանի որ նա հօրեղբօր կինն էր եւ կրում էր «*թագուհի*» տիտղոս: Երբեմն այս արձանագրութեան մէջ յիշուած Խոշաքին համարել են Շահնշահ Ա.ի կինը: Սակայն յայտնի է, որ Շահնշահ Ա.ի կինը Սադուն իշխանաց իշխանի դուստր Նազուտ[43] իշխանուհին էր:

***

Սարգիս Ա. Մեծն իր աղջիկներին՝ Դոփին եւ Խորիշահին կնութեան տալով Արցախ աշխարհի Ծար եւ Ներքին Խաչէնի թագաւորական ծագում ունեցող տէրերին, հաւատարիմ՝ իր հեռահար նպատակներին, իր խնամակալութեան տակ գտնուող աւագ եղբօր՝ Վահրամի որդուն՝ Զաքարէ Փոքրին ամուսնացրել է Ներքին Խաչէնի իշխանական երկրորդական ճիւղի ներկայացուցիչ Հասան Դեսոմեանի դուստր Խաթունի հետ: Այս ամուսնութիւնը տեղի պիտի ունեցած լինի ԺԲ. դարի 80ականների վերջերին: 1191ին, Թամար թագուհու դէմ ապստամբած Գէորգի ռուսի եւ վրաց դիդեբուլների դէմ Թմբկաբերդի եւ Ագարակի ճակատամարտերում տարած յաղթանակից յետոյ, Թամար թագուհին Զաքարէ Փոքրին ժառանգական իրաւունքով շնորհել է Գագն իր շրջակայքով: Յետագայ տարիներին, Զաքարէ Փոքրը հօրեղբօրորդի՝ Զաքարէ Բ.ի ռազմական օգնութեամբ ազատագրել է Գագից արեւելք եւ հարաւ գտնուող բազում բերդեր: Այդ ժամանակ, 1180ականների վերջերին, ծնուել է Զաքարէ Փոքրի եւ Խաթունի որդին՝ Վահրամը: Նա ապագայում յայտնի կը դառնայ Վահրամ Գագեցի անունով: 1204ին Բասէնի դաշտից Խլաթի ուղղութեամբ արշաւող Զաքարէ Փոքրի գլխաւորած հայոց առաջապահ գունդը Մանազկերտի կիրճի մուտքի մօտ յայտնուել է ծուղակում եւ գլխովին ջարդուել: Զոհուել է նաեւ Զաքարէ Փոքրը: Հօրը փոխարինել է պատանի որդին՝ Վահրամ Գագեցին:

Ներքին Խաչէնում իշխանական տարածքների համար ծաւալուած պայքարում նաեւ տոհմակիցներն էին իրար դուրս մղելու քաղաքականութիւն վարում: Տոհմի աւագ ճիւղի ներկայացուցիչը, այս դէպքում Վախթանգ Տանգիկը, ճնշումներ է գործադրել արդէն խիստ թուլացած տոհմակից Դեսոմեան տան ներկայացուցիչների դէմ: Արդիւնքում՝ Խաթուն իշխանուհու հետ Վահրամ Գագեցու պալատ են եկել նաեւ Դեսոմեան տոհմի պայազատներ Սեւադան եւ Սենեքերիմը: Նրանք Գագում մահացել ու թաղուել են Հաղբատի Կաթողիկէ եկեղեցու բակում: Խաթուն իշխանուհին Հաղբատի Մարիամաշէն գաւթի հիւսիս-արեւմտեան կողմում, իր հոգու փրկութեան եւ եղբայրների յիշատակին, արտաքուստ ուղղանկիւն, ներքուստ խաչաձեւ յատակագծով փոքր եկեղեցի է կառուցել, արձանագրելով՝ «... *շինեցաւ սուրբ եկեղեցիս արդեամբ Խաթունին, դստէր Հասանայ, յազգէ Դեսոմեանց, որ բերաւ ի Խաչէնոյ յամուսնութիւն Զաքարիա, որ տէր Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլ գաւառաց...*»[44]: Խաթուն իշխանուհին ամենայն հաւանականութեամբ եկեղեցին կառուցել է Զաքարէ Փոքրի զոհուելուց յետոյ, 1204ից յետոյ:

Խաթուն իշխանուհու մասին որեւէ այլ տեղեկութիւն չի պահպանուել:

Վաչուտեանները Զաքարեան թագաւորական տան ամենահաւատարիմ սիւներից մէկն են եղել: Այրարատի կողմնակալութեան իշխանաց իշխան Վաչէ Ա.ի տոհմը, որ Վաչուտ պապի անունով կոչուել է Վաչուտեան: Հակառակ միւս հայ տոհմիկ իշխանատների, որոնք ունէին հին պատմութիւն, տոհմական-ժառանգական կալուածքներ, որեւէ պատմական յիշատակութիւն կամ սեփականութիւն չի ունեցել նա: Վաչէ Ա.ի քրոջ՝ Վանենիի Հաղբատի արձանագրութիւնից յայտնի է, որ հօր անունը եղել է Սարգիս, պապինը՝ Վաչուտ[45]: Վաչէ Ա.ն Հաղբատի նուիրատուական արձանագրութեամբ լրացուցիչ յայտնում է նաեւ մօր անունը. «*Ի թուիս հայ/ոց/ ՈԿԹ /1220/: Այս մեր գիր է Հաղբատա եպիսկոպոսիս Յոհանիսի, որ տրուաք Վաչէի՝ թոռին Վաչուտին եւ իւր կենակցին՝ Մամախաթունին... Որչափ կենդանի են՝ Վաչէի ծնողացն առնեն՝ Սարգսի եւ Կատային, եւ յետ նոցա՝ :Ա:/1/ աւրն Վաչէի եւ :զԱ:/1/ Մամախաթունին*»[46]: Յայտնի չէ Վաչուտը, նրա որդի Սարգիսը, վերջինիս կին Կատան հայկական ո՛ր տոհմից են սերել: Միայն կարող ենք փաստել, որ Զաքարեան Հայաստանում նրանք նոր՝ Վաչուտեան անունով տոհմի հիմնադիր են դարձել:

1205ին Այրարատի կողմնակալ-փոխարքայ նշանակուած Վաչէ Ա.ի կողմից 915-21ին կառուցուած Աղթամարի տաճարի պատին առկայ Արծրունեաց ճիւղերից մէկին պատկանած էգ արծուի մէջքին կանգնած արու արծուի պատկեր-զինանշանի որդեգրումը, Հիւսիսային Հայաստանի տարածքում Մակարավանքի Կաթողիկէ եկեղեցու բեմառաջքի աստղի մէջ 1205ին Վաչէ Ա.ի որդեգրած զինանշանի զետեղումը, ապա 1220ականներին նրա կողմից այդ նոյն եկեղեցու գաւթի կառուցումը, Նոր Վարագավանքի Կաթողիկէ եկեղեցու շքամուտքի զարդագօտու մէջ Վաչէ Ա.ի զինանշանի զետեղումը, հակառակ ընդունուած կարգի, Վաչէ Ա.ի կողմից իր աւագ որդուն պապ Վաչուտի անուան փոխարէն Քուրդ անուն տալու փաստը, որ Մահկանաբերդի տիրոջ, Թիֆլիսի քաղաքապետ Ամիր Քուրդ Արծրունու անունն էր, գալիս են հաստատելու, որ Վաչէ Ա.ն ծանրակշիռ բարեկամական-տոհմական կապ է ունեցել Ամիր Քուրդ Արծրունու հետ: Ամենայն հաւանականութեամբ Վաչէ Ա.ի պապ Վաչուտ Ա.ն սերել է Վասպուրականի Արծրունիների երկրորդական ճիւղերից մէկից, Վասպուրականից հեռացած Արծրունիների հետ գաղթել եւ հաստատուել է Տաշիր-Զորագետում Կիւրիկեան (Բագրատունի) թագաւորների կողմից Արծրունիներին տրուած Մահկանաբերդում: Վաչուտ Ա.ի որդի Սարգիսը ծառայել է Մահկանաբերդի Վահրամ Արծրունու հեծելազօրում, ապա՝ Արծրունիներին փեսայացած Զաքարէ Ա.ի որդի Սարգիս Բ. Մեծի հայկական բանակում: Բարձրացել է զինուորական աստիճանակարգով: Այդ ուղիով տարել է նաեւ որդուն՝ Վաչէ Ա.ին, ով Սարգիս Բ.ի որդիների՝ Զաքարէ Բ. շահնշահի, Իւանէ Ա. զօրավարի օրօք, նրանց նուիրուած զօրական է դարձել եւ, հաւատարիմ ծառայութեան համար, 1205ին նշանակուել է

Այրարատի կողմնակալ-փոխարքայ: Կարծում ենք, որ մինչ այդ նշանակումը Վաչէ Ա.ն նշանակալի դիրք է ունեցել բանակում, ռազմավարի իր դերը հնարաւորութիւն է տուել նրան մեծ հարստութիւն կուտակել: Շուտով նա իր կուտակած հարստութիւնը վերածել է բերդ-ամրոցների, հոյաշէն եկեղեցիների, անգամ՝ յաւակնել Զաքարէ Բ. ի ստեղծած Հայք-Հայաստանում ամենայայտնի եկեղեցաշինարար-բարերարի տիտղոսին:

Վաչէ Ա.ի պետական, մշակութային գործունէութիւնը թերի կը լինի առանց կնոջ՝ Մամախաթուն իշխանուհու կերպարի: Զաքարեան շրջանի ոչ մի ամուսնական զոյգ այնպիսի միասնութեամբ հանդէս չի եկել, ինչպէս Վաչէ Ա.ն եւ Մամախաթունը: Առանց Մամախաթուն իշխանուհու գործակցութեան Վաչէ Ա.ն որեւէ գործ չի իրականացրել:

Ինչպէս Վաչէ Ա.ի, այնպէս էլ Մամախաթուն իշխանուհու տոհմական պատմութիւնից միայն հօր ու մօր անուններն են յայտնի: Հոռոմոսի գրատան արձանագրութեան մէջ Մամախաթուն իշխանուհու հօր անուան մասին յայտնւում է. «*ՈՀԸ /1229/: Շնորհիւն Ք/րիստոս/ի: ես՝ Վաչէ որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն՝ դուստր Ապուսէրհին, շինեցաք զՆշխարապունս ի վանս Հոռոմոսի...*»[47]: Տեղերի եկեղեցու մի կիսաեղծ արձանագրութեան մէջ յիշւում է մեծ իշխան Ապուսեհրի անունը, որը պատահական անուն չէ եւ պատահաբար չի յայտնուել այնտեղ: Ամենայն հաւանականութեամբ Հոռոմոսից յայտնի նոյն Ապուսեհրն է[48]: Թեղենեաց վանքի գաւթի բարաւորին Մամախաթունի անունից փորագրուել է. «*Թվ/ին/ ՈԿ /1211/: ես՝ Մամախաթունս, ամուսին Վաչէի, դուստր .....նի արարի քշոցանի արծաթի եւ այլ արդիւնս եւ եկու ս/ուր/բ ուխտս Թեղենե/ա/գ...*»[49]: Մամախաթունի նուիրատուական արձանագրութիւնում հնագէտ-վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը Մամախաթունի հօր անունը թէականով կարդացել է «Հասան»[50]: Հնարաւոր է Մամախաթունի հայրն ունեցել է Ապուսեհր-Հասան երկանուն: Մամախաթունի մօր անունը փորագրուած է Տեղերի եկեղեցում. «*Ի Նաւակարտ/ա/գ ս/ուր/բ Տիրամարն մատուցանի պատարագ ամենայն խորանս Վախախին, մայր Մամախաթունին՝ շինողի եկեղեցւոյս*»[51]:

Վաչէ Ա.ն եւս, ինչպէս դարաշրջանի միւս իշխանաւորները, ամուսնական պատահական ընտրութիւն չէր կարող կատարել: Այդ ընտրութիւնը եւս պիտի նրա անմիջական սիւզերէնների՝ Զաքարէ Բ. շահնշահի եւ Իւանէ Ա. զօրավարի հետ համաձայնեցուած լինէր: Ամուսնութիւնն ամենայն հաւանականութեամբ տեղի է ունեցել Անբերդի ազատագրումից յետոյ 1196-97ին: Պէտք է ենթադրել, որ այդ ամուսնութիւնից նրանց աւագ որդի Քուրդը (ապագայ իշխանաց իշխան, Այրարատի կողմնակալ Քուրդ Ա. Վաչուտեան) ծնուել է ամենաուշը դարավերջին, քանի որ նա 1221ին, Աստուածատուր վարդապետի Յովհաննավանքի արձանագրութեան մէջ, յիշուել է կողմնակալութեան ամիրայի պաշտօնում[52]. «*ի կողմնակալութեան մերո նահանգի ամիր Քրդին, որդո Վաչէի, ՈՀ /1221/ թվին*»[53]: Վաչէ

Ա.ն եւ Մամախաթունը Կեչառիսի 1213ի նուիրատուական արձանագրութեան համաձայն ունեցել են երկու որդի՝ Քուրդ եւ Վաչուտ անուններով: Վաչուտ Բ.ի մասին ոչինչ յայտնի չէ, բացի նրանից, որ նրա որդի Վաչէն (հերթականութեամբ կը լինի Վաչէ Գ.) 1240ականների կէսերին արձանագրութիւն է թողել պապի՝ Վաչէ Ա.ի Սանահինի համալիրում կառուցած մեծ գաւթում: Նա Շէնգաւիթում ունեցած Բաղալի այգին[54] նուիրել է վանական համալիրի Սուրբ Աստուածածին եկեղեցուն եւ պատարագ ստացել եղբօր՝ Դաւթի համար: Հաւանաբար եղբայրն այդ ժամանակ մահացել է[55]: Վաչէ Ա.ի միւս որդին՝ Քուրդ Ա.ն դարձել է ԺԳ. դարի հայ իրականութեան ամենայայտնի գործիչներից մէկը: Պատմիչ Վարդան Արեւելցին *Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցւոյ* երկում գրել է. «*Աղաչեմ... ողորմութիւն եւ թողութիւն մեղաց եւ ամենայն երախտաւոր պարոնացն Սադունին, Սմբատա, Քրդին, Պռաւշայ, եւ ամենայն բնակչաց երկրիս*»[56]: Խօսքը Սադուն Բ. Արծրունու, Սմբատ Օրբէլեանի, Քուրդ Ա. Վաչուտեանի, Պռոշ Ա. Խաղբակեանի մասին է:

ԺԳ. դարի ոչ մի այլ տիրուհի Մամախաթուն Վաչուտեանի ակներեւութիւնը չունի: Կողմնակալ-փոխարքայ, իշխանաց իշխան Վաչէ Ա.ն եւ Մամախաթունը միասին հովանաւորել են Սանահինի մեծ գաւթի[57], Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցու[58], Տեղերի Կաթողիկէ եկեղեցու[59], Սաղմոսավանքի Կաթողիկէ եկեղեցու[60], Յովհաննավանքի Կաթողիկէ եկեղեցու[61], Հոռոմոսի գրատան[62] կառուցումը, նուիրատուութիւններ են կատարել Հաղբատի[63], Հառիճի[64] միաբանութիւններին:

Մամախաթուն իշխանուհին տիրապետել է անձնական միջոցների կամ այդ միջոցները նրան յատկացրել է իշխանաց իշխան Վաչէ Ա. Վաչուտեանը եւ նա իր անունից կառուցել է Թեղենեաց վանքի գաւիթը: Գունագեղ գմբէթով գաւթի կառուցումն աւարտուել է 1211ին[65]: Այդ շինութիւնը Վաչուտեանների իրականացրած առաջին կառոյցն էր Այրարատի կողմնակալութեան տարածքում, որ Վաչուտեան տան ներկայացուցիչը հինգ կամ վեց տարի առաջ ժառանգական իրաւունքով ստացել էր Զաքարէ Բ. շահնշահից: Թէեւ 1213ի եւ 1218ի երկու արձանագրութիւններով Վաչէ Ա. իշխանաց իշխանը յայտնել է, որ Մամախաթունի հետ կառուցել են Տեղերի Կաթողիկէ եկեղեցին եւ գաւիթը, բայց Տեղերի 1232ի աւարտական արձանագրութեան մէջ Մամախաթունը միայն իրեն է վերագրել Տեղերի համալիրի կառուցումը. «*ՈՁԱ /1232/: ... Ես՝ Մամախաթունս, շինեցի զեկեղեցիքս զմեծ եւ զփոքր եւ զժամատունս յիշատակ ինձ եւ առն իմոյ Վաչէի...*»[66]: 1229ին Մամախաթունը Անիում ունեցած ձիթհանը նուիրել է Սանահինի միաբանութեանը. «*Ի թուիս ՈՀԸ /1229/: Ես՝ Մամախաթուն, ամուսին Վաչէի, եւտու զիմ գանձագին ձիթհանքն եանի զԻշխանի ակն յԱ/սպուա/ծածինս*»[67]: Հաւանաբար նոյն ժամանակ նա մէկ այլ ձիթհանի մէկ ակը նուիրել է Հաղբատի միաբանութեանը. «*Ես՝ Մամախաթուն, տուի*

զձիթահանքն, որ ի Վարհամա որդեացն գնեցի, զմին ակն, որ երբ ժամն մեր լինի, զսեղանն մեր անուն դնեն»[68]:

Ըստ աւանդութեան ԺԳ. դարի մեծագոյն բարեգործ Մամախաթուն իշխանուհին մահից յետոյ թաղուել է ոչ թէ ամուսնու մօտ՝ Յովհաննավանքի Կաթողիկէ եկեղեցում, այլ իր կառուցած Տեղերի Կաթողիկէ եկեղեցում:

Քուրդ Ա. Վաչուտեանը մի երկար հետք է թողել հայոց 1200-70ականների պատմութեան մէջ: Մինչեւ հօր մահը (գուցէ 1233/4) համագահակալել է հօրը, եղել է Այրարատի կողմնակալութեան ամիրը[69]: Հօր մահից յետոյ Զաքարէ Բ.ի որդի եւ յաջորդ Շահնշահ Ա.ի կողմից հաստատուել է Այրարատի կողմնակալ-փոխարքայ: Մինչեւ կողմնակալ-փոխարքայ դառնալը, մօտաւորապէս 1215-17ի միջեւ ամուսնացել է Դսեղի Համազասպեան-Մամիկոնեան տոհմաւագ Մարզպան Մամիկոնեանի դստեր՝ Խորիշահ Մամիկոնեանի հետ: Խորիշահ իշխանուհու անունը առաջին անգամ յիշուել է Կարբիի բերդում տեղադրուած խաչքարի պատուանդանին, որը թերեւս Քուրդ իշխանաց իշխանը պատուիրել է կողմնակալ-փոխարքայ դառնալու առթիւ. «*Ի թուիս ՈԶԴ /1235/: Յիշխանութեան Շահնշահի, որդո Զաքարիայի: Ես՝ Քուրդ, որդի Վաչէի եւ ամուսին իմ Խորիշահ*»[70]:

Քուրդ Ա.ն իր բոլոր ձեռնարկումներին, հօր ու մօր օրինակով, մասնակից է դարձրել կնոջը՝ Խորիշահին: Նրանք միասին, ծնողների օրինակով, նուէրներ են տուել Սանահինի վանքին, որտեղ խաչքար է կերտուել ի բարեխօսութիւն իրենց եւ տեղադրուել հօր՝ Վաչէ Ա.ի կառուցած մեծ գաւթի դրսի սիւնաշարի դիմաց. «*Նշանդ Աստուծոյ, աւգնեա Քրդի, Խորիշահի եւ զաւակաց*»[71]: Նրանք նուէրներ են տուել Մամախաթունի կառուցած Թեղենեաց վանքի գաւթին[72]: Ամուսիններով, մինչեւ 1240, Նիգ (Ապարան) գաւառի Վարդենիս գիւղում մոնղոլների կողմից աւերուած Անբերդի փոխարէն կառուցել են մայրաքաղաքային Վարդենիս դղեակը[73], 1241ին նորոգել Սաղմոսավանքի Կաթողիկէ եկեղեցին եւ գաւիթը[74], 1244ին կառուցել Աստուածընկալի Կաթողիկէ եկեղեցին, մինչեւ 1250ը՝ նաեւ գաւիթը[75], նոյն ժամանակներում կառուցել Եղիպատրուշի եկեղեցու գաւիթը[76], 1250ին՝ Յովհաննավանքի գաւիթը[77], 1255ին՝ Սաղմոսավանքի գրատունը[78]:

Քուրդ Ա.ն պայքարել ու հասել է նրան, որ հայոց Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը, 1243ին, ի բաւարարումն Վաչուտեանների պահանջի, հրամանով հիմնել է Անբերդի եպիսկոպոսական անկախ թեմը՝ Յովհաննավանք կենտրոնով[79]:

Քուրդ Ա.ն եւ Խորիշահն հիւրընկալել են Արցախի ինքնակալ արքայ Հասան Ջալալ Խաչէնցին (1240ին): Նա գումար է նուիրել Յովհաննավանքի եկեղեցուն, որի համար «սպասաւորք սորա» մէկ պատարագ են խոստացել նրան[80]: Վաչուտեաններին այցելել է Վայոց Ձորի կողմնակալ, իշխանաց իշխան Պռոշը (1247ին): Նա մօր արեւշատութեան համար

Յովհաննավանքին նուիրել է մեծ գումար, որի համար ստացել է 10 պատարագ[81]: Վարդան Արեւելցին 1268ին իր բարձր տիպի դպրոցը Խոր Վիրապից տեղափոխել է Սաղմոսավանք, ապա՝ նոյն կողմնակալութիւնում գտնուող Թեղենեաց վանք[82]: Նոյն թուականին Այրարատի տէրերն հիւրընկալել են Գէորգ Սկեւռացին[83]:

ԺԳ. դարի այս նշանաւոր զոյգին հիւր է եղել Կիլիկիայի հայոց Հեթում Ա. թագաւորը (նա Կարակորում գնալիս 1254ին եւ վերադարձին՝ 1255ին, ամիսներով մնացել է Վարդենիսի դղեակում)[84]: Գանձակեցին գրել է, որ Հեթում Ա.ի վերադարձից յետոյ Վարդենիսի դղեակ են եկել բարձրաստիճան իշխանաւորներ, հոգեւորականներ, ընդ որում ոչ միայն հայեր, այլեւ ուրիշ քրիստոնեայ ազգերի ներկայացուցիչներ. «*Ապա եկին առ նա (Հեթում Ա. թագաւորի մօտ - Տ.Պ.) եպիսկոպոսք եւ վարդապետք եւ քահանայք եւ իշխանք քրիստոնէից... Ընդունէր զամենայն ազգաց քրիստոնեայս եւ աղաչէր սիրով կալ ընդ միմեանս*»[85]: Գանձակեցու հաղորդումից երեւում է, որ ինքն եւս եղել է դղեակում. «*Բազում իրս... պատմէր նա մեզ*»[86]:

Քուրդ Ա.ն եւ Խորիշահը մինչեւ 1240ը ունեցել են Վաչէ, Դաւիթ (վաղամեռիկ), Հասան, Դաւիթ, Տայիր անուններով տղաներ եւ Մամախաթուն (վաղամեռիկ), Մամքան անուններով աղջիկներ: Տարբեր կերպ են դասաւորուել նրանց ճակատագրերը: Մինչեւ 1261 թոռ Վաչէն (Վաչէ Բ.) համագահակալել է Քուրդ Ա.ին: Այդ թուականին նա մահացել է: Նա աւելի վաղ մահացած Դաւիթ եղբօր յիշատակին մի փոքրիկ թաղակապ եկեղեցի է կառուցել Սաղմոսավանքի համալիրում: Ամուսնացել է ոմն Մամախաթուն իշխանուհու հետ: Վաչէ Բ.ի մահից յետոյ իշխանական գահ են բարձրացել նախ Հասան, ապա Դաւիթ որդիները: Հասան իշխանը ամուսնացել է Ուքանանց տոհմից Արուս Խաթունի հետ: Մամքան դուստրը ամուսնացել է Արցախի Ծարա ճիւղից Հասան Բ. իշխանաց իշխանի հետ եւ ծնել այդ տոհմի հզօր իշխաններից մէկին Գրիգոր Բ. իշխանաց իշխանին եւ Դադի ու Խաղայի վանքերի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսին:

Խորիշահ իշխանուհու հետ Դսեղից Այրարատի կողմնակալութեան մայրաքաղաք էին եկել նաեւ նրա ծառայականները՝ Մալիքան եւ Անիփան[87], ինչպէս նաեւ Համազասպ անունով մի փոքրիկ տղայ, որ Յովհաննավանքի հոգեւոր դպրանոցում կրթուել ու աստիճանակարգով բարձրացել եւ 1260ականներին նշանակուել է Անբերդի թեմի առաջնորդ: Այս Համազասպ արքեպիսկոպոս Մամիկոնեանը[88] եղել է յուժ ուսումնասէր ու բազում ձեռագրեր է պատուիրել, որոնցից եօթը պահպանուել ու գտնւում են Մատենադարանում: Եպիսկոպոսական գահի վրայ նրան փոխարինել է Ներսէս եպիսկոպոս Մամիկոնեանը[89]:

Խոխանաբերդի կամ Ներքին Խաչէնի թագաւոր Վախթանգ Տանգիկը 1214ին մահացել է: Նա կտակով գահը թողել է որդուն՝ ԺԳ.

դարի ապագայ խոշորագոյն ռազմաքաղաքական գործիչ, դիւանագէտ, ինքնակալ[90], արքայ[91], թագաւոր[92], կողմնակալ[93] Հասան-Ջալալ Դոլոյին եւ նրան խնամակալ է նշանակել կնոջը՝ Խորիշահ իշխանուհուն[94]: Փաստորէն մինչեւ Հասան Ջալալը լիիրաւ տիրակալ կը դառնար, երկրամասը կառավարել է մայրը՝ Սարգիս Բ. Մեծի դուստր Խորիշահ իշխանուհին: Հաւանաբար մինչեւ 1220ականների կէսերը իշխանուհին ամուսնացրել է որդիներին՝ Հասան Ջալալին, Զաքարէին, Իւանէին, աղջկան՝ Մարինէին:

Խորիշահն Հասան Ջալալին ամուսնացրել է Բաղաց թագաւորի թոռ Մամքանի հետ: Սա փաստւում է Հասան Ջալալի Գանձասարի 1240ի, 1251ի Մամքան իշխանուհու Վաճառ գիւղում կառուցած մատուռի, Հասան Ջալալի Գանձասարի գաւթի 1261ի շինարարական արձանագրութիւնների մէջ «*թոռն Բաղաց թագաւորին*»[95] ձեւով: Սա հին բարեկամութեան թարմացում էր: Հասան Ջալալի պապի՝ Հասան Մեծի հայր Վախթանգը եւս նոյն Բաղաց թագաւորի դուստր Մամա իշխանուհու հետ էր ամուսնացել:

Մամքանը բազում առաքինութիւններ ունէր, բարեսէր եւ հայրենապաշտ իշխանուհի էր: Սկեսուրը՝ Խորիշահը, համոզուելով, որ արժանաւոր հարս ունի՝ ճգնելու է գնացել Երուսաղէմ: Մամքանը ամուսնու հետ շարունակել է Գանձասարի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու կառուցումը, որի օծումը տեղի է ունեցել 1240ի Վարդավառի օրը՝ եօթհարիւրից աւելի նշանաւոր այրերի մասնակցութեամբ:

Մոնղոլական ներխուժումն ու հայոց անկախ պետութեան վերացումը, Հասան Ջալալին էլ են դարձրել նրանց ենթակայ: Իր երկրամասն աւերումից փրկելու համար Հասան Ջալալն իր աւագ դուստր Ռուզուքանին կնութեան է տուել մոնղոլ զօրավար Չարմաղանի որդի Բորա Նուինին[96]: Ամուսնութիւնը տեղի է ունեցել 1236ին:

Այդ թուականից սկսած Հասան Ջալալը մոնղոլական բանակի կազմում, իր զօրաբանակով, մասնակցել է արշաւանքների Փոքր Ասիայում:

Ամուսնու բացակայութեան Մամքան թագուհին Կաթողիկէ եկեղեցու արեւմտեան կողմում կառուցել է եկեղեցու գաւիթը: Գանձակեցին գրել է, որ գաւիթը բացառապէս կառուցել է. «... *կին նորա Մամքան*»[97]:

1248ին թագազարմ ամուսինները նորոգել են մոնղոլների կողմից աւերուած Կեչառիսի եկեղեցական շէնքերը: Այստեղ փորագրուած նուիրատուական արձանագրութեան մէջ Հասան Ջալալը Մամքանին պատուել է «*դուստր Բաղաց թագաւորին*» տիտղոսով[98]:

Հասան Ջալալը անսահմանօրէն սիրել եւ պատուել է կնոջը: Գանձասարի կաթողիկէ եկեղեցու շինարարական արձանագրութեան մէջ հոգեւոր դասից պահանջել է «*Յիսնակամտեն մինչ ի յայտնութիւն Մամքանա՝ իմ կենակցին*» պատարագ մատուցել:

Հասան Ջալալը պատուիրակութեամբ այցելել է Ոսկէ Հորդա եւ բանակցել Բաթու խանի որդու՝ Սարթախի հետ: Պատուիրակութեան կազ-

մում են եղել նաեւ Հեջուպ Գրիգոր Տղան, պատանի Դեսում իշխանը, Մարկոս վարդապետը, Գրիգոր եպիսկոպոսը[99]:

1255ին Հասան Ջալալն իր տարածքների խնդիրները լուծելու նպատակով գնացել է Կարակորում՝ Մանգու խանի մօտ: Նրան ուղեկցել են կինը, որդին՝ Աթաբէկը: Կարակորումում բոլոր հարցերը բանակցութիւնների արդիւնքում լուծուել են յօգուտ Հասան Ջալալի եւ 1260ին ընտանեօք վերադարձել են: Հասան Ջալալը գործի բերումով մնացել է Թաւրիզում: Կինն ու որդին վերադարձել են Խոխանաբերդ: Երբ ամիսներ յետոյ Հասան Ջալալը հասել է Խոխանաբերդ՝ Մամքանին մահացած է գտել: Նրա մահից մէկ տարի անց՝ 1261ին մոնղոլ հարկահան Արղունը Ղազուինում դաժանութեամբ յօդակոտոր է արել ու յօշոտել Հասան Ջալալին: Որդին՝ Աթաբէկը հօր մասունքները տեղափոխել եւ հողին է յանձնել Գանձասարի գաւթի տապանատանը:

Մամքան իշխանուհու մահը ցնցել է Հասան Ջալալին: Նա հօր ու մօր 1212ին պատուիրած Աւետարանի 8բ եւ 9ա էջերին ինքնագիր յիշատակարանով սգացել է կնոջ մահը.

Ես՝ Հասան Ջալալ Դալա, գնացի յարեւելս առ արքայն նեւրողաց... ես եւ ամուսին իմ Մամքան եւ փեառնապուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արեւելս հիւսիսոյ եւ ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն, որ Մանգու խանն: Ես յամեալ զամս հինգ, դարձա ի փուն, նոյնպէս Մամքան եւ Աթաբակն դարձան: Եւ նոքա ժամանեալ ի տեղի իւրեանց, եւ ես ի Թաւրէժ յամեալ, յորամ եւ ապրիասական մահ ի վերա հասեալ փոխի Մամքան ի Քրիստոս: Եւ ես գտի զպայծառ տուն իմ լի սգով արտասուաք անմխիթարելի, զի նա էր ամենայն զարաց եւ հեծելոց, նաեւ եկեղեցոյ եւ քահանայից սփոփիչ եւ մխիթարութիւն: Արդ ի թվին Հայոց ՉԺ /1261/ ետու զՍուրբ Աւետարանս ծաղկազարդ յիշատակ աստուածասէր տիկնոջն Մամքանայ ի մեր Լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից, ի հոգեւոր տէրն Ներսէս, որ այժմ բարեհամբաւ ունի զաթոռն սուրբն եւ առաւել քան զսուրբս: Արդ աղաչեմ զձեզ սուրբ հայրք եւ ընթերցողք, որ զյիշատակս կարդայք, լի բերանքվ ասասջիք զտիեզերս, նորոգէ եւ միաւորէ զաստուածասէրն Մամքան, ու դասէ ի դասս ընտրելոց քոց, բարեխաւսութեամբ արարչագործ կամաց քոց, եւ աղաչանաք սրբոց աստուածածնիդ եւ ամենայն սրբոց քոց դասէ եւ պայծառացոյ ընդ սուրբս քո ընդ նմին...[100]:

Հասան Ջալալը եւ Մամքանը ունեցել են Աթաբակ անունով տղայ, Ռուզուքան, Մամախաթուն, Մինախաթուն անունով աղջիկներ: Ռուզուքանը Բորա Նուինի կինն էր, Մամախաթունը՝ միջնադարի անուանի վաճառական Ումեկ Մանազկերտցու երկրորդ[101], Մինախաթունը՝ Սիւնիքի կողմնակալ-փոխարքայ Տարսայիճ Օրբէլեանի երկրորդ կինը[102]:

Մահկանաբերդի Արծրունիները

Մահկանաբերդի Արծրունիները Վասպուրականի Արծրունեաց հզօր թագաւորական ընտանիքի ճիւղերից էին: Նրանք թագաւորութեան ան-

կումից յետոյ, երկրամաս ներխուժած քրդական հրոսակների ճնշումներին չդիմանալով՝ հեռացել էին հիւսիս-արեւելք ու Լոռու Կիւրիկեան թագաւորներից բնակատեղ էին ստացել Մահկանաբերդն ու Կայէն գաւառը շրջակայ հողերով: Նրանք պահպանել էին իրենց հեծելազօրը եւ երբ վրաց թագաւորները, սելջուկեան ամիրայութիւնների դէմ պայքարի քօղի տակ, գրաւել էին Լոռու թագաւորութեան հողերն ու վերացրել հայոց այդ վերջին թագաւորութիւնը, Մահկանաբերդի տէր Վահրամ Արծրունին իր հեծելազօրով ծառայութեան էր անցել վրաց թագաւորի մօտ, նշանակուել Տփղիսի շահաբ (քաղաքապետ): Յատկապէս առաջադիմել է նրա որդի Վասակ իշխանաց իշխանը: Նա տոհմի ժառանգական արտօնութիւն էր դարձրել Տփղիսի եւ Քարթլիի էրիսթաւաց էրիսթաւի՝ ամիրայից ամիրայի եւ արքունի գանձապետի տեղակալի՝ «նուցվալի մեճուրճլէթ-ուխուցէս»ի պաշտօնները, եղել է Վիրքի Դաւիթ Ե. թագաւորի (1154-55) սիրելին: Դաւիթ Ե. թագաւորը նրան դեսպանել է Մածնաբերդի Կիւրիկէ Գ. (1145-70) թագաւորի մօտ բանակցելու եւ անգամ պատրաստ է եղել Լոռու թագաւորութեան նախկին հողերն ու մայրաքաղաքներ Շամշուլդէն եւ Լոռէ Բերդը վերադարձնել տիրոջը՝ Կիւրիկէ Գ.ին: Այս լուը զայրացրել է վրաց դիդեբուլներին[103], յատկապէս հայ Մամիկոնեաններից սերած, վրացացած Օրբէլեան իշխաններին[104], որոնք այդ ժամանակ Լոռու Թագաւորութեան հողերի ու մայրաքաղաքի տէրերն էին: Եւ նաեւ նրանց գործակցութեամբ կազմակերպուել է Դաւիթ Ե. թագաւորի թունաւորումը: Վիրքի գահին մէկ տարի ձեւականօրէն նստել է Դաւիթ Ե.ի անչափահաս որդի Դեմետրին: Մէկ տարի անց գահը գրաւել է եղբայրը՝ Գէորգի Գ. թագաւորը (1156-84): Նա հակակրանք է ունեցել Վասակ Արծրունու հանդէպ, իբրեւ թէ Դաւիթ Ե. թագաւորի օրօք նա բաւարար յարգալից չի եղել իր հանդէպ: Վասակ իշխանաց իշխանը, վախենալով թագաւորի դաւից, եղբայրների՝ Ամիր Քրդի եւ Ամիր Սարգսի հետ հեռացել է Կարնոյ երկիր: Նրանց սիրով է ընդունել Կարնոյ երկրի ամիրա Սալտուխը՝ ծառայութեան է նշանակել, տուել է գիւղեր ու հողեր: Այստեղ Վասակ իշխանաց իշխանը մահացել եւ թաղուել է քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցում՝ «*զդրօշ նորա եւ զփող եւ զիշխանութիւն՝ փուեալ եղբօր նորա՝ որ կոչեցեալ էր Քուրդ, եւ կայր նա անդ մեծաւ պատուով*»[105]: Այս ժամանակներում է Կիլիկիայից վերադարձող Մխիթար վարդապետը՝ ապագայ Մխիթար Գօշը, հիւրընկալել նրա տանը: Գէորգի Գ.ն մահացել է 1184ին: Գահ բարձրացած Թամար թագուհին 1185ին, հայոց եւ վրաց զօրքի ամիրսպասալար, պետական խորհրդի՝ դարբազիի անդամ է նշանակել հայոց բանակի ամիրսպասալար Սարգիս Բ. Զաքարեանին: Վերջինս միջնորդել է Թամար թագուհուն՝ ներում շնորհել աներորդուն, Ամիր Քուրդ Արծրունուն: Թամար թագուհին կատարել է նրա խնդրանքը: Թամար թագուհին Ամիր Քուրդին է վերադարձրել Արծրունեաց տոհմից իր հօր խլած Մահկանաբերդն ու Կայէն գաւառը, բարձրացրել նրա պաշտօնը, նշանակել Վիրքի պետական

խորհրդի՝ «դարբազիի» անդամ, արքունի գանձարանապետ՝ «մեճուրճլէթուխուցէս», ինչպէս նաեւ Տփղիսից հարաւ-արեւելք ընկած հողերը Ռուսթաւի քաղաքով եւ Արագվի գետի ձախափնեայ շրջանը՝ Ժինվանի քաղաքով նրան է տուել: 1191ին Ամիր Քուրդը հարել է Թամար թագուհու առաջին ամուսնու՝ Գէորգի ռուսի կազմակերպած խռովութեանը, որի պատճառով պաշտօնազրկուել եւ հեռացել է Մահկանաբերդ: Ամիր Քուրդի Կարնոյ աքսորը տեւել է մօտաւորապէս 1156-84՝ շուրջ 28 տարի: Այդ ժամանակ է հայոց բանակի ամիրսպասալար Սարգիս Բ.ը ամուսնացել նրա քրոջ՝ Սահակդուխտի հետ: Ամենայն հաւանականութեամբ հենց այդ տարիներին են ծնուել Ամիր Քուրդի դուստրը՝ Արզու խաթունը, որդիները՝ Սադունը եւ Դաւիթը:

***

ԺԲ. դարի 80ականների վերջերին, աքսորից վերադառնալուց յետոյ, պաշտօնում վերականգնուած Տփղիսի ու Քարթլիի ամիրապետ, Վիրքի պետական խորհրդի անդամ, արքունի գանձարանապետ Ամիր Քուրդ Արծրունու[106] հետ բարեկամութիւնը նշանակալի էր ցանկացած տոհմի համար: Եւ նրա դստեր՝ Արզու Խաթունի ձեռքը խնդրեց Վերին Խաչէնի տէր Վախթանգ Հաթերքցի թագաւորը:

Վախթանգ Հաթերքցին Հասան Մեծի որդին էր, սերում էր Առանշահիկների թագաւորական զարմից, իրեն համարում էր թագաւոր եւ Խաչէնի միւս երկու ճիւղերի աւագ[107]:

Վախթանգ Հաթերքցու եւ Արզու Խաթունի ամուսնութիւնը հաւանաբար կայացել է 1180ականների երկրորդ կէսին: Այդ ժամանակ հայ-վրացական միացեալ բանակի կազմում գործող հայոց հեծեալ բանակի ամիրսպասալար Սարգիս Բ.ն՝ Զաքարէի որդին, թէեւ պաշտօնով զիջում էր Ամիր Քուրդին, բայց արդէն յաւակնում էր Հայաստանի եւ Վիրքի յարաբերութիւններում գերակայ դիրքի: Նա վաղուց փեսայացել էր Արծրունեաց տոհմի հետ՝ դառնալով Ամիր Քուրդի քրոջ ամուսինը:

Քաղաքական յաւակնութիւններ ունեցող Սարգիս Բ.ն յենարանի խիստ կարիք ունէր: Արծրունեաց տոհմաւագը՝ Ամիր Քուրդը, Սարգիս Բ.ին օգնելու նպատակով, հաշուառելով միասնական շահերը համադրելու, կիսանկախ, սեփական ռազմական ուժերը պահպանած Արցախի տէրերին համահայկական ռազմաքաղաքական դաշտ բերելու անհրաժեշտութիւնը, դստերը՝ Արզու Խաթունին տուել է Վախթանգ Հաթերքցուն:

Արզու Խաթունը կարեւորագոյն դերակատարութիւն է ունեցել ոչ միայն Հաթերքի, այլեւ Արցախ աշխարհի կեանքում: Նա, ամուսնու, տեգրերի՝ Սմբատի, Վասակի, Գրիգորի, Խոյդանի, Գրիգորէսի օժանդակութեամբ իր յարկի տակ տեղ է տուել, հովանաւորել հօր միջնորդութեամբ Գանձակից հեռացած եւ Խաչէնում հանգրուանած միջնադարի մեծ մտածող, կրօնագէտ, իրաւագէտ, առակագիր, հայ եկեղեցու դաւանանքի անխոնջ պաշտպան, Հայոց Արեւելից կողմի հոգեւոր առաջնորդ Մխիթար Գօշ[108]

վարդապետին: Վերջինս իր ժամանակիցներից մտքի թռիչքով առաջ է անցել, զգացել է, որ Զաքարեանները ձգտում են պետութիւն կերտել, իսկ դրա հիմնաւորումը դատական համակարգի ձեւաւորումը պիտի լինէր եւ 1184ին ձեռնարկել է դատաստանագրքի ստեղծման գործին: 1185ին Թամար թագուհին Սարգիս Բ. Մեծին է յանձնել հայ-վրացական բանակի ամիրսպասալար-ընդհանուր հրամանատարին տրուող կալուածքը՝ Լոռի-Տաշիրը: Նա երկրամասին շնորհել է «**սամթաւրо**» (ինքնուրոյնացած), իսկ Սարգիս Բ. Մեծին՝ «**մթաւար**» (թագաւոր) կարգավիճակ՝ ընդունելով երկրամասի անկախութիւնը միջազգային-իրաւական ձեւաչափով[109]:

Հենց Հաթերքում, Մխիթար Գօշը գրել-աւարտել է իր *Դատաստանագիրք Հայոց* օրէնքների ժողովածուն[110]: Գօշի *Դատաստանագրքում* կանոնակարգուել են պետութեան հասարակական-տնտեսական յարաբերութիւնների իրաւական հիմքերը, բազմակողմանի ուրուագծուել դատական-վերահսկողական գործառոյթները:

Գօշը երախտագիտութեամբ է ընդունել Վախթանգ Հաթերքցու եւ Արզու Խաթունի աւանդը: Նա *Դատաստանագրքի* մէկ օրինակ է նուիրել ամուսիններին, հետեւեալ ընծայագրով. «*Յիսուս Քրիստոս, յորժամ գաս ի նորոգեալ զերկիրս, նորոգեա հոգով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսին իւր զԱրզու խաթուն ի կեանս անմահս*»[111]: Մէկ այլ օրինակի վրայ Գօշը գրել է. «*Տէր Աստուած, վայելել տացէ աստուածայսէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ ի կամս իւր զգիրքս Դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին*»[112]: Մխիթար Գօշն այս գրութեամբ փաստել է, որ ժամանակի իրաւական պահանջները լիովին բաւարարող օրէնքների ժողովածուն անմիջապէս կիրառութեան է ընդունուել Հաթերքի իշխանութիւնում: Փորձարկուած օրէնսգիրքն ընդունուել է նաեւ Զաքարէ Բ.ի Հայք-Հայաստան պետութիւնում:

Վախթանգ Հաթերքցու եւ Արզու Խաթունի բարեկամութիւնը Գօշի հետ շարունակուել է նաեւ, երբ վերջինս Ամիր Քուրդի հովանաւորութեամբ Հաթերքից տեղափոխուել եւ հաստատուել է Կայէն բերդի մօտ գտնուող Գետիկի վանքում: 1188ի հզօր երկրաշարժից Գետիկի վանքը եւ շրջակայ գիւղերը հիմնովին աւերուել են: Ամիր Քուրդի միջնորդութեամբ Զաքարէ Բ.ն, երկրաշարժից կործանուած Գետիկի վանքի փոխարէն Գօշին նոր տարածք է յատկացրել Տանձուտի ձորաբերանի ընդարձակ հովտում, որտեղ՝ Զաքարէ Բ.ի, Իւանէ Ա.ի, Ամիր Քուրդի, նրա որդիներ Սաղուն եւ Դաւիթ իշխանների, բայց հիմնականում Վախթանգ Հաթերքցու, Արզու Խաթունի, Վախթանգի եղբայրներ Գրիգորի, Գրիգորիսի, Խոյդանի, Վասակի հովանաւորութեամբ նա կառուցել է Նոր Գետիկի վանական համալիրի Կաթողիկէ եկեղեցին[113]:

1214ին Վախթանգ Հաթերքցին կնքել է մահկանացուն: Նրանից առաջ կեանքին հրաժեշտ էին տուել երկու որդիները՝ Հասանը եւ Գրիգորը:

Հասանը զոհուել էր թուրքերի դէմ կռուում, Գրիգորը՝ նրա զոհուելուց երեք ամիս անց, մահացել էր հիւանդութիւնից: Իր կեանքի տղամարդկանց յիշատակին Արզու Խաթունը Դաղի վանական համալիրում կառուցել է կենտրոնագմբէթ եկեղեցի, այդ համալիրի ամենահոյակապ կառոյցը[114]: Այն արտաքուստ ուղղանկիւն, ներքուստ՝ խաչաձեւ յատակագծով, չորս անկիւններում կրկնայարկ աւանդատներով կառոյց է: Այն Արցախ աշխարհի ճարտարապետութեան համար նորոյթ էր՝ գմբէթաւոր սրահ, պսակուած լայն ու բազմանիստ բարձր թմբուկով եւ սրածայր վեղարով: Ներսի կիսասիւները եւ դրանք կապող կամարները սպիտակ եւ գորշ քարից են՝ զարդարուած նուրբ քանդակներով: Եկեղեցին ներսից որմնանկարուած է:

Կաթողիկէ եկեղեցու արեւելեան պատին ողջ հասակով քանդակուած են Արզու Խաթունի որդիներ Հասան եւ Գրիգոր իշխանները եկեղեցու մանրակերտով, իսկ հարաւային ճակատին՝ Սուրբ Դաղիի եւ Վախթանգ Հաթերքցու պատկերաքանդակները: Եկեղեցու արեւելեան պատին, որտեղ Հասան եւ Գրիգոր իշխանների պատկերաքանդակն է, փորագրուել է Արզու Խաթունի 19 տողանոց շինարարական արձանագրութիւնը. «*... ես՝ Արզու Խաթունս, նուաստ աղախին Քրիստոսի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վաղթանկա... իւսով մեծաւ շինեցի զսուրբ կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմոն եւ զաւակաց իմոց Հասանա՝ անդրանիկիս իմոն եւ Գրիգորի, որ եւ ի Տէրն կիսաւրեա վախճանելոց, զի վասն իմ մեղաց խրատեաց զիս Աստուած...*»[115]:

Արզու Խաթունը բազմակողմանի շնորհով օժտուած, տաղանդաշատ կին էր, գիտէր ներկերի գունային երանգներ, քանդակաձեւ զարդամոտիւներ, ինչպէս նաեւ հագուստի հիւսածոյ նախշեր ստեղծելու գաղտնիքը: Նկարել է, ձեռագործել: Նա դուստրերի հետ մեծածաւալ վարագոյրներ է գործել, որոնք զարդարել են Հաղբատի, Մակարավանքի, Դաղի վանքի մեծ խորանները: Նրա գործած վարագոյրը զարդարել է նաեւ Նոր Գետիկի Կաթողիկէ եկեղեցու խորանը: Այն եկեղեցուն է նուիրաբերուել 1197ին՝ եկեղեցու օծման առիթով. «*Սա բազում ինչ օժանդակ եղեւ արար եւ վարագոյր գեղեցիկ՝ դստէրօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակակերպ եւ նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք տնօրինականօք Փրկչին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն*»[116]:

Կաթողիկէ եկեղեցու ներսի հարաւային պատին Քրիստոսն Աւետարան է մեկնում Դաւիթ Սքանչելագործին, իսկ Աստուածածինը՝ խաչազարդ ուրար: Գանձակեցին անուղղակի հաստատել է, որ Արզու Խաթունն է նկարել Կաթողիկէ եկեղեցու պատերին եղած որմնանկարները. «*Եւ որք տէսանէին, օրինութիւն տային աստուծոյ, որ եւր կանանց իմաստութիւն զոստայնանկութեան եւ հանճար նկարակերտութեան*»[117]:

Վախթանգ Հաթերքցու եւ իր որդիների մահով Վերին Խաչէնի թագաւորական գահը դատարկ է մնացել: Թէեւ Վախթանգ Հաթերքցու եղբայրներից Սմբատը եւ Վասակը որդիներ ունէին, որոնք կարող էին ժառանգել հօրեղբօր գահը, բայց խաղաղ բանակցութիւնների արդիւնքում, Վերին Խաչէնի տարածքը փոքր մասով միացուել է Ծարի իշխանական տանը, իսկ մեծ մասով՝ Ներքին Խաչէնի թագաւորութեան:

Որքան է ամուսնու եւ որդիների մահուանից յետոյ ապրել Արզու Խաթունը՝ պատմական տեղեկութիւն չենք գտել: Որեւէ տեղեկութիւն չենք գտել նաեւ նրա դուստրերի յետագայ ճակատագրի մասին:

Խաղբակեանները

Խաղբակեան[118] տոհմի հիմնադիր, Ներքին Խաչէնի Հաւապտուկ բերդի տէր Խաղբակ Բ.ի որդի Վասակ իշխանը[119] 1201ին, հայոց բանակի կողմից Գեղարքունեաց տարածաշրջանի ազատագրումից յետոյ, երբ բացուել է Խաչէնի ճանապարհը, ազատագրական պայքարի մաս դառնալու նպատակով, թողել է հայրենի Հաւապտուկը, իր հեծեալ գնդով եկել է Լօռէ բերդ եւ ծառայութեան մտել հայոց բանակում:

Այս Վասակի եղբայր Ջաջուռ իշխանի դուստր Վանենին, որ ամուսնացել է Մահկանաբերդի Սեւորդեան տոհմից Կուկի որդի Աբասի հետ, 1232ին Նոր Գետիկի վանքում Ստեփանոս գրչին ձեռագիր, նկարազարդ Աւետարան է պատուիրել, որի յիշատակարանում գրել է, որ Վասակ իշխանի, իր հօր՝ Ջաջուռ իշխանի տոհմի նախնին Բակ իշխանն է, որ եղել է Վարդան Մամիկոնեանի զօրավարներից[120]:

Վասակ իշխանն աչքի է ընկել Բջնիի ազատագրման գործողութեան ժամանակ: Իւանէ Ա. Զաքարեանը ստանձնել է նրա հովանաւորութիւնը, նշանակել իր տան զօրաբանակի սպարապետ: Արցախից նոր զօրագնդերով եկել ու Վասակ սպարապետին են միացել որդիները Մկդէմը, Պապաքը, Հասան-Պռոշը, եղբայրները՝ Հասանը, Ջաջուռը, Գրիգորը, Աբուսէթը: Զաքարէ Բ. շահնշահի յանձնարարութեամբ Իւանէ Ա. զօրավարը բնակութեան համար Վասակի իշխանին ժառանգական իրաւունքով տուել է Բջնիի մօտ գտնուող Կեչառիս բնակավայրն իր վանական համալիրով:

Յաջորդ տարիներին Վասակ Խաղբակեանը հայոց զօրաբանակի գլուխ անցած Գեղարքունիքի կողմից, Վարդանեաց լեռնանցքով անցել է Սիւնիք: Կարճ ժամանակում ազատագրել Քարագլուխ գիւղը, Եղեգիս գիւղի մօտ գտնուող Սմբատաբերդը, Հերհերի ձորը, Ոստինք, Հերմոն, Ցաղաց Քար, Արատես գիւղերը, Բոլորաբերդ ամրոցը, Ջերմուկի ձորը, Քաշաթաղ-Ծարի լեռնանցքը, Գնդեվանքի ամրոցը, Սիսիանի լեռնանցքը, Վայք աւանը, Գոմք, Ուղեձոր, Մարտիրոս, Սերս, Ազնաբերդ, Արփի, Արենի, Ռինդ, Չիւա, Ելփին, Ամաղու, Խաչիկ գիւղերը, Ամաղուի մօտ գտնուող հզօրագոյն Հրաշքաբերդը:

Զաքարէ Բ. շահնշահը 1205ին ազատագրուած Հայք-Հայաստանում վարչական բարեփոխումներ կատարելով կողմնակալութիւն-կուսակալութիւն-փոխարքայութիւններ է ստեղծել: Ազատագրուած Վայոց Ձորի արեւելեան տարածքի վրայ ստեղծուած կողմնակալութեան կողմնակալ է նշանակել Վասակ իշխանին, նրան շնորհել իշխանաց իշխան բարձրագոյն կոչում, տոհմին տուել Խաղբակեան անուն:

Մինչեւ 1210, գործակցելով Լիպարիտ Օրբէլեանի հետ, որին Զաքարէ Բ.ն նշանակել էր Հրաշկաբերդի եւ շրջակայ բնակավայրերի վրայ ստեղծուած կողմնակալութեան կողմնակալ, ազատագրել են ամբողջ Նախիջեւանը, որ հիմնականում անցել է Վասակին եւ արեւելեան Սիւնիքը՝ Սիսական-Գորայք[121] հատուածը, որն անցել է Լիպարիտին: Բարկուշատ-Արաքս գետ-Խուդափերինի կամուրջ հատուածը տրուել է Վասակ Խաղբակեանին:

Ռազմական եռանդուն գործողութիւններին յաջորդած կարճատեւ խաղաղ տարիներից մէկում՝ 1204ին, իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանը կնոջ՝ Մամայի գործակցութեամբ կատարել է Կեչառիսի Կաթողիկէ եկեղեցու հիմնարկէքը: Պատերազմական գործողութիւններին մասնակցող ամուսնու փոխարէն շինարարութեան ընթացքը ղեկավարել է Մամա իշխանուհին: Եկեղեցու շինարարութիւնն աւարտուել է 1214ին: Կաթողիկէ եկեղեցին Կեչառիսի համալիրի մարգարիտն է, գտնուում է Սուրբ Նշան եկեղեցու հարաւային կողմում: Այն արտաքուստ քառակուսի յատակագծով կենտրոնագմբէթ շէնք է: Ներքուստ, չորս անկիւններում տեղադրուած երկյարկ աւանդատների շնորհիւ խաչաձեւ տեսք ունի: Արեւելեան կողմում բարձր բեմով խորանն է: Չորս կենտրոնական սիւների եւ կիսասիւների առաջացրած լուսանցքի վրայ բարձրանում է կլոր գմբէթը սրածայր վեղարով: Կաթողիկէի արեւմտեան շքամուտքի ճակատաքարի եւ կամարի քարի վրայ փորագրուած է. «*Ես՝ Վասակ, որդի Խաղբակա, շինեցի զսուրբ Կաթողիկէս յաւգնականութիւն եւ յերկարութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ աթաբակի, եւ արեան հարազատի իւրոյ Շահնշահի, եւ Աւագին, եւ մատն պատրոն Խոշաքին, եւ եղբայրացն, եւ որդեացն, յարեւշատութիւն ինձ, եւ ամուսնոյ իմոյ Մամային՝ մեղաց թողութիւն*»[122]:

Կաթողիկէի հարաւային արտաքին պատին Վասակ Խաղբակեանի մեծ արձանագրութեան տակ իր վիմագիրն է թողել նաեւ Մամա իշխանուհին. «*Ես՝ Մամայս, աղախին Քրիստոսի, դուստր ... Վասակա, զայգին իմ, որ յերեւան գնեցի ի հալալ ընչից իմոյ եւ յեպու /ի սուրբ եկ/եղեցիս, որ շաբաթ աւրն :Բ:/2/ խորանն լինի իւթիցն պատարագ կամակցութեամբ տեառն իմոյ Վասակա*»[123]:

Այս արձանագրութիւնը միակն է, որտեղ յայտնուել է Մամա իշխանուհու հօր անունը՝ Վասակ, բայց քանի որ այդ անուանը նախորդող տողի

վերջին քարն իր տեղից ընկել եւ ոչնչացել է, այլեւս անհնար է ճշտել, թէ այդ Վասակը որ տոհմից է եղել:

Վասակ Խաղբակեանի եւ Մամա իշխանուհու ամուսնութիւնն ամենայն հաւանականութեամբ տեղի է ունեցել 1180ականների առաջին կէսին, քանի որ 1201ին Խաչէնից Լօռէ բերդ եկած Վասակի երեք որդիները՝ Պապաքը, Մկդէմը, Հասան-Պռոշը այնպիսի տարիքում էին, որ արդէն ռազմական փորձ ունէին եւ Վայոց Ձորում ու Սիւնիքում մասնակցել հօր մղած պատերազմներին: Այդ հաստատում է նաեւ իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանը 1214ին Կեչառիսի շինարարական արձանագրութեան մէջ: Մասնաւորապէս նա կարդացողներին խնդրել է. «... *յիշեսցիք եւ աստուածապուրք եղբարքն իմ եւ զինակիցք Ջաջուռն, եւ Գրիգոր, եւ սիրելի որդիք իմ հարազատք Պապաքն, Մկդէմ եւ Հասան երկանուն Պռաշ*»[124]: Այստեղ «զինակիցք» բառը հաւասարապէս վերաբերում է Վասակ Խաղբակեանի եւ եղբայրներին, եւ հասուն որդիներին: Կայ եւս մէկ փաստ, որ Վասակի եւ Մամայի ամուսնութիւնը եղել է 1180ականների առաջին կէսին: 1222ին Գանձակի մօտ Իւանէ Բ. աթաբէկի ընդհանուր հրամանատարութեամբ ղփչաղների դէմ եղած պատերազմին տոհմական զօրամասը ղեկավարել է ոչ թէ տարիքն առած իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանը, այլ նրա աւագ որդի Պապաքը[125]: Նրա հետ նոյն կռուին մասնակցել է հօրեղբայրը՝ Քեղուա ձորի, բերդի, Աղջոց Սուրբ Ստեփանոս, Վանստան վանքերի տէր Գրիգոր Խաղբակեանը: Հայոց բանակն այդ պատերազմում պարտուել է: Խաղբակեան Պապաքն սպանուել, Գրիգոր իշխանը գերուել է: Նրան առաջարկուել է հաւատափոխ լինել, որից իշխանը հրաժարուել, անգամ հայհոյել է Մուհամէդի կրօնը: Դրանից յետոյ «*քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի, եւ փշով քանցեցին զամենայն մարմինս նորա, եւ այնքան տանջեցին զնա մինչեւ ի գանելն աւանդեաց զոգին*»[126]:

Վասակ Խաղբակեան հօր, եղբօր համար սա մեծագոյն ողբերգութիւն էր, առաւել եւս, որ այդ նոյն տարում մահացել էր նաեւ Մկդէմ որդին: Որդիների անժամանակ մահուան եւ եղբօր այդօրինակ սպանութեան կսկիծը հզօր, քաջ հերոսի, թուրքերի, այլազան թշնամիների երբեմնի ահասարսուռ հակառակորդ, իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանին տարաւ գերեզման: Ձօրականի մահը եղել է ամենայն հաւանականութեամբ 1223ին. «*փոխեցաւ ի Քրիստոս Վասակ իշխանաց իշխանն եւ էառ զդրոշայն որդի նորա քաջն Պռոշ...*»[127]:

Նրան գահի վրայ փոխարինել է երրորդ որդին՝ Պռոշ իշխանաց իշխանը: Մամա իշխանուհու մասին պատմական աղբիւրները լռում են: Որդին՝ իշխանաց իշխան Պռոշը, մօր համար, 1244ին, նուիրատուութիւն է կատարել Ներքին Խաչէնի Կօշիկ անապատին[128], 1247ին՝ Յովհաննավանքի Սուրբ Կարապետ եկեղեցուն[129]: Սրանից կարելի է ենթադրել, որ առնուազն մինչեւ 1247ը Մամա իշխանուհին ապրել է:

Օրբէլեանները

Էլիկումի որդի Լիպարիտը ԺԳ. դարի առաջին տասնամեակում հիմնել է Օրբէլեան տոհմի հայկական ճիւղը: Նրա նախնիները Տայքից Հիւսիսային Հայաստան գաղթած Մամիկոնեան հին տոհմի ճիւղերից էին, որի մի մասը հաստատուել էր Կիւրիկեանների թագաւորութեան ենթակայ Գուգարքի Տաշիր գաւառի Դսեղ գիւղում Մամիկոնեան-Համազասպեան տոհմանունով, մի մասը՝ նոյն Կիւրիկեաններին ենթակայ Օրբէթ բերդում եւ այդ բերդի անունով Վիրքի ազնուականութեան շարքն անցել Օրբէլեան տոհմանունով:

Էլիկումի հայր Իւանէ Օրբէլեանը, որ Վիրքի բանակի ամիրսպասալար-սպարապետն էր եւ որպէս սպարապետական կալուածք ստացել էր Կիւրիկեաններից Վիրքի թագաւորների գրաւած Լոռու նախկին թագաւորութեան տարածքը Լոռէ բերդով, 1176-77ին ապստամբել է Վիրքի Գէորգի Գ. թագաւորի դէմ՝ թագաժառանգ Դեմնային գահին նստեցնելու պատրուակով, պարտուել ու Վիրքի տարածքում ապրող տոհմանդամներով ոչնչացուել է: Միայն ամիրսպասալար Իւանէ Օրբէլեանի Լիպարիտ եղբայրն իր Էլիկում եւ Իւանէ որդիների հետ փրկուել է, քանի որ օգնութեան խնդրանքով գնացել էր սելջուկեան Ելտկուզ աթաբէկի մօտ, այդ դէպքերից առաջ ու դէպքերից յետոյ այլեւս չի վերադարձել Վիրք: Յետագայում, Թամար թագուհու օրօք, Լիպարիտի որդիներից Իւանէն է վերադարձել Վիրք եւ միայն Օրբէթ բերդն է ետ ստացել: Լիպարիտն ու Էլիկումը մնացել են Գանձակում: Առանի, Ատրպատականի, Նախճվանի կառավարիչ Մուհամէդ Փահլաւանի կողմից Էլիկումը նշանակուել է Երնջակ բերդի, Ճահուկ աւանի, Քալասրահի զօրավար: Այստեղ Էլիկումն ամուսնացել է Աբաս Ճահկեցու դստեր, Սիւնեաց Ստեփաննոս Գ. եպիսկոպոսի (1170-1216) քրոջ դստեր՝ Խաթունի հետ: Այդ ամուսնութիւնից ամենայն հաւանականութեամբ 1180-82ի միջեւ ծնուել է տղայ, որին պապի անունով կոչել են Լիպարիտ: Պապ Լիպարիտը եւ նրա Էլիկում որդին 1184ին Գանձակի մօտ տեղի ունեցած հայ-վրացական եւ ելտկուզեան պատերազմում զոհուել են: Էլիկումի կինն ու որդին մնացել են բախտի քմահաճոյքին: Ինչ-որ մի սելջուկ բռնի տիրել է Էլիկումի կնոջը՝ Խաթունին, երեխայի հետ տարել Նախճվան:

1201ին, Զաքարէ Բ.ի հրամանով կազմակերպուել է Խաթունի եւ նրա որդի Լիպարիտի ազատագրումը: Զաքարէ Բ. շահնշահը նրան է վերադարձրել տոհմական իշխանաց իշխան կոչումը եւ տուել Վայոց Ձորում Վասակ Խաղբակեանի ազատագրած Հրաշքաբերդը շրջակայ գիւղերով, իսկ 1205ին նշանակել Հրաշքաբերդի եւ շրջակայ հողերի վրայ ստեղծուած Սիւնիքի կողմնակալ-փոխարքայ՝ տալով իրաւունք կռուով մեծացնելու իր կողմնակալութեան սահմանները: Մինչեւ 1210ականները Լիպարիտ իշխանաց իշխանը, գործակցելով Վայոց

Ձորի կողմնակալ-փոխարքայ Վասակ Խաղբակեանի հետ, ազատագրական կռիւներով իր կողմնակալութեան սահմանները մեծացրել է ի հաշիւ արեւելեան Սիւնիքի:

Իւանէ Բ. Զաքարեանը, երիտասարդ Լիպարիտին մեծ ապագայ կանխատեսելով, նրան առաջարկել է բարեկամանալ, ամուսնանալ իր դստեր՝ Թամթայի հետ: Բայց կատարուել է անսպասելին: Լիպարիտ իշխանաց իշխանը տեսել է Բուպակ իշխանաց իշխանի գեղեցկուհի դստերը՝ Ասփային եւ որոշել, որ նա է լինելու իր կինը:

Բուպակ իշխանաց իշխանը Զաքարեան եղբայրների մարտական զինակիցն էր: Մասնակցել էր պետականութեան կերտման բոլոր մարտերին: 1187ին նստելով հայոց թագաւորական գահին, Զաքարէ Բ.ն հիմնել է հայոց պետութեան կառավարական խորհուրդ: Նա Բուպակին շնորհել է իշխանաց իշխանի կոչում, նշանակել պետական նախարար՝ թագաւորական իշխանութեան հրամանատար, հեծուբների[130] մեծ: 1190ականների սկզբին Զաքարէ Բ.ն ազատագրուած Գեղարքունիքի տարածքից Հայրավանքն իր շրջակայ հողերով պարգեւել է Բուպակ իշխանաց իշխանին: Պատմիչ Ստեփանոս Օրբէլեանն իր պապի մասին գրել է. «*Եւ զի էր նորա գործակալ եւ հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց եւ աւագ հեծելազ մեծ եւ բարեպաշտ իշխանն Բուպա կոչեցեալ, որ էր աներ Լիպարիտի՝ որդւոյ Ելիկումին...*»[131]:

Լիպարիտ Օրբէլեանը 1216ին, իր իշխանութեանն արժանի հոգեւոր կենտրոն ունենալու նպատակով, Ամաղու գիւղի մօտ գտնուող Նորավանքի տարածքում նոր՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայ անունով Կաթողիկէ եկեղեցի է հիմնադրել, որի կառուցումն աւարտուել է 1221ին:

Եկեղեցու հիւսիսային պատին, ներքուստ, փորագրուած է.

Ի թվին ՈՀ /1221/... ես՝ Լիպարիտ, որդի Ալակումին, թոռն մեծի Աւրպելանց, զի հայրն իմ Ալումին քինացաւ թագաւորին Աբխ/ա/զաց, գնաց ի տունն Էլտկուզանց եւ նա մեծ աւգատով մեծարեց զնա, ետ նմա զմեծ քաղաքն Համիան[132]: Ես՝ Լիպարիտս, որդի նորա, մանուկ գոլով դարձա վերըստին ի լուսաւոր հաւատն սրբոյն Գրիգոր/ի/, եկի առ մեծ աթաբակ Իւանէ եւ հայրենեացն փոխան եր/ե/տ զՀարաշկաբերդ իւր կերովս, եւ ես շինեցի զվանքս, որ կոչի Նորավանք: Յառ/աջն/որդութե/ան/ տէր Սարգսի Սիւնեաց վերադիտողի, շինեցի զեկեղեցիս եւ աւագ սուրբ Նշան առ աթաբակ Իւանէի էր... Տէր Սարգիս եւ միաբանքս հաստատեցին ինձ զԱւագ խորանն :Գ:/3/ աւր ժամ կիրակէն, ի շաբաթն եւ զինգշաբաթն ի յամէն շաբաթում, եւ կենակցին իմո Ազփաին սահմանեցին ի տարումն տ/եառ/նընդառաջ աւրն զամէն եկեղեցիքս...[133]:

Եկեղեցու օծումը տեղի է ունեցել 1223ին: Հարիւրաւոր բարձրաստիճան պաշտօնեաների, հոգեւորականների թւում հանդէսին մասնակցել է նաեւ Լիպարիտ իշխանաց իշխանի աները՝ Բուպակ իշխանաց իշխանը: Այդ մասնակցութեան մասին թողը՝ Ստեփանոս պատմիչը գրել է.

Ի... յամիրսպասալարութեան Հայոց եւ Վրաց Շահնշահի, եւ յաթաբէկութեան Իվանէի՝ հաւրեղբաւր նորին, ես՝ մեծուցեալ ծառայ Քրիստոսի Բուպակ՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորաւանից առ երջանիկ հայրապետս տէր Սարգիս եւ ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց եւ իմ արեամբն թափել, եւ իմ պարոնայքն մեծ սիգելով այն ինձ էին որոշեալ՝ զԱղբերիս գիւղ իւր ամէն սահմանաւն, ի սուրբ եկեղեցին Նորաւանիցս ի սուրբ Կարապետ եւ ի սուրբ Նախավկայս տուի՝ ազատ յամենայն հարկաց: Եւ չունի հրաման յայսմհետէ մինչեւ յաւիտեան հակառակիլ այսմ, ոչ յաւագաց, ոչ յիմոց, ոչ յօտարաց: Եւ տէր Սարգիս եւ այլ միաբանքս հաստատեցին ի տարումն տասն պատարագ ի Վարդաւառին տաւնին իմ մաւրն հոգւոյն: ... ի թուիս Հայոց ՈՀԲ /1223/[134]:

Բուպակ իշխանաց իշխանի դուստր, Լիպարիտ Օրբէլեանի կին, գեղեցկուհի Ասփա իշխանուհին աշխարհ է բերել Էլիկում, Սմբատ, Իւանէ, Փոխրադալա, Տարսայիճ անուններով որդիներին, որոնք բոլորն էլ ծնուել էին մինչեւ 1221ը[135]: Նրանցից երեքը՝ Էլիկումը, Սմբատը, Տարսայիճը իրար յաջորդելով 1226-90ին եղել են Սիւնեաց իշանապետութեան գահակալներ:

Ասփա իշանուհուն 1261ին Նորավանքում կառուցած գաւթի շինարարական արձանագրութեան մէջ յիշել է որդին, Սմբատ արքան, պատուիրելով պատարագներ. «*շաբաթ աւր ու կիրակի Լիպարիտի, հինգշաբաթն Ասփային*»[136]: Նա մօրը յիշել է նաեւ Քարկոփի վանքի Սուրբ Աստուածածին եկեղեցու նորոգման արձանագրութեան մէջ[137]:

Լիպարիտ իշխանաց իշխանը մահացել է 1226ին որդիներին թողներով շէն ու հարուստ իշխանութիւն:

Իշխանուհի Ասփան մահացել է 1263ին ու թաղուել որդու՝ իշխանաց իշխան Սմբատ արքայի[138], կողմնակալի[139] Նորավանքում կառուցուած դամբարանում: Նրա գերեզմանը առաջին շարքում է: Յաջորդում է Էլիկում, Իւանէ, Փախրադալա որդիների գերեզմաններին, որոնք իրենից առաջ են մահացել: Տիրուհու տապանաքարին փորագրուած է. «*Հբարեպաշտ մայր իշխանացս զԱսփայն յիշեցէք*»[140]:

1226ին հօր՝ Լիպարիտ Օրբէլեանի Սիւնիքի կողմնակալ-փոխարքայի գահին նստել է աւագ որդին՝ Էլիկում Օրբէլեանը: Նա ամենայն հաւանականութեամբ այդ պահին 21 կամ 22 տարեկան է եղել: Դեռեւս հօր կենդանութեան օրօք ամուսնացել էր Դսեղի Մամիկոնեան-Համազասպեան գերդաստանից Մարծպան Ա. իշխանի Գրիգոր որդու դուստր Թամկայի հետ: Օրբէլեանը գրել է, որ Էլիկումը. «*փեսայացել էր Գրիգորոյ Մարծանեանցին, որ յազգէ Մամիկոնէից համբաւի եւ վարէր զտէրութիւն հօրն*»[141]: Այս Թամկայի հօրաքոյր Խորիշահը նոյն ժամանակ ամուսնացել էր Այրարատի կողմնակալ-փոխարքայ Վաչէ Ա. իշխանաց իշխան Քուրդ Ա. Վաչուտեանի հետ[142]:

Նորավանքի Կաթողիկէ եկեղեցու գաւթում Էլիկում իշխանաց իշխանի որդի Բուրթէլ իշխանը 1261ին խաչքար է պատրաստել տուել մօր՝ Թամկա իշխանուհու յիշատակին: Խաչքարը գեղաքանդակ է, խոր փորուածքով: Կոթունի մասում պատրաստող վարպետը փորագրել է. «*Ի թվ/ին/ ՉԺ /1261/: Ի կամս ողորմութե/ամբ/ արարչին Յիսուսի: Ես՝ Բուրթել, որդի Էլիկումի, որդո Լիպարիտի, կանկնեցի Զա/սրուա/ծընկալ նշանս մաւր իմ Թամկա, յիշաւրակ յաւիտէնից*»[143]:

Արձանագրութեան յաւիտենական յիշատակ բառերը յուշում են, որ 1261ին Թամկան մահացել է եւ որդին նրա յիշատակը յարգել է այդ անզուգական խաչքարով, որ տեղադրուած է ընդհանուր պատուանդանի վրայ՝ գաւթի ներսում, արեւմտեան պատի տակ, հիւսիսային մասում:

Էլիկում իշխանաց իշխանը զոհուել է Նփրկերտում, մոնղոլական արշաւանքի ժամանակ՝ 1253ին:

1261ին մօր յիշատակի խաչքարը պատրաստելուց մի փոքր անց, մոնղոլ զօրավար Հուլաղու խանի զօրքերի կազմում, ղփչաղների դէմ պատերազմելիս, Թերէք գետի ափին Բուրթէլ իշխանը սպանուել է: Հօրեղբօր որդու մասին պատմիչ Օրբէլեանը գրել է. «... *փղայ հասակաւ սպանաւ ի պատէրազմի յաշխարհին Խալանդրաց, ի դաշտին Խազրաց, զոր այժմ Խփչախ կոչեն*»[144]:

Էլիկում իշխանաց իշխանի եւ Թամկայի դուստր Ռուզուքանը Վախթանգ Հաթերքցու որդի Հասանի կինն էր: ԺԳ. դարի կէսերին ամուսիններով նուիրատուութիւն են կատարել Գեղարդավանքին. «... *Ես՝ Հասան, որդի Վաղթանկայ, թոռն մեծի Սմբատայ թագաւորազնին, միաբանեցաք սուրբ ուխտիս... Եւ սպասաւորք սորա խոստացան ի տարվոջն Զ/6/ աւր պատարագ Զատկին, Ա/1/ ինձ, Գ/3/՝ իմ մաւրն Նանային, Բ/2/՝ Ռուզուքանայ՝ կենակցի իմոյ*»[145]: Ռուզուքան իշխանուհին նուէրներ է տուել Մեծառանից Սուրբ Յակոբ վանքին եւ գաւթի պատին արձանագրել. «*Թվին ՉԺԳ /1264/: ... Ես՝ Ռուզուքան, ամուսին Հասանայ, դուստր մեծ իշխանին Էլիգումին*»[146]:

***

Ներկայացուող ուսումնասիրութիւնից դուրս մնացած իշխանական միւս տների՝ առաջին-երկրորդ սերունդների զաւակների, ուրիշ աւելի փոքր տոհմերի, ինչպէս նաեւ ուսումնասիրութեան առաջին մասում ներկայացուած տոհմերի միւս սերունդների ամուսնական կապերին կ'անդրադառնանք յաջորդիւ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատ՝ Կ.Ա.Մելիք-Օհանջանեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1961, էջ 209:

[2] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 9*, կազմ.՝ Ս.Գ. Բարխուդարեան, Կ.Գ. Ղաֆադարեան, Ս.Տ. Սաղումեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Երեւան, 2012, էջ 298, արձանագրութիւն 630:

[3] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 1, Անի Քաղաք*, կազմ.՝ Յ.Ա.Օրբելի, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1966, էջ 57:

[4] Կարօ Ղաֆադարեան, *Հաղբատ. Ճարտարապետական Կառուցուածքները եւ Վիմական Արձանագրութիւնները*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 184:

[5] Նոյն:

[6] Բագրատ Ուլուբաբեան, *Խաչէնի Իշխանութիւնը X-XVI Դարերում*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 190:

[7] *Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Լուսաբանեալ*, Վենետիկ, 1862, էջ 140. նաեւ՝ Ուլուբաբեան, էջ 148:

[8] Կարապետ Եպիսկոպոս, *Նիւթեր Հայ Մելիքութեան Մասին. Բ Պրակ, Դուիեանք եւ Մելիք Շահնազարեանք*, Ս.Էջմիածին, Ելեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ, 1914, էջ 44 եւ յետոյ:

[9] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 5, Արցախ*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան Երեւան, ԳԱ Հրատ., 1982, էջ 127:

[10] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 184. նաեւ՝ *Դիւան, Պրակ 9*, էջ 172, արձանագրութիւն 305:

[11] *Դիւան, Պրակ 5*, էջ 12:

[12] Ուլուբաբեան, էջ 142:

[13] Գանձակեցի, էջ 268:

[14] Տ. Պետրոսեանց, «Դսեղի Մամիկոնեանների Տոհմածառը»՝ *Վաչուրեաններ*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2001, էջ 272:

[15] *Դիւան, Պրակ 9*, էջ 340, արձանագրութիւն 761:

[16] Նոյն, էջ 343, արձանագրութիւն 768:

[17] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 10, Շիրակի Մարզ*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Երեւան, 2017, էջ 53:

[18] Նոյն, էջ 54:

[19] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 6, Իջեւանի Շրջան*, կազմ.՝ Ս.Ա.Աւագեան, Հռ.Մ.Ջանփոլադեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 65, արձանագրութիւն 127:

[20] Սիկիլ՝ հրամանագիր:

[21] Կարօ Ղաֆադարեան, *Սանահնի Վանքը եւ Նրա Արձանագրութիւնները*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1957, էջ 171. նաեւ՝ *Դիւան, Պրակ 9*, էջ 100, արձ. 172:

[22] Գանձակեցի, էջ 152:

[23] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 182:

[24] Արձանագրութեան այդ մասը բացակայում է, վերականգնումը մերն է:

[25] Ղաֆադարեան, *Սանահնի*, էջ 185:

[26] *Դիւան, Պրակ 6*, էջ 135, արձանագրութիւն 258:

[27] Հազարապետ:

[28] Զաքարիա Քանաքեռցի, *Պատմութիւն Կոնդակ Սուրբ Ուխտին Յոհաննու Վանից*, աշխ.՝ Արմէն Վիրաբեան, Երեւան, Հեղինակային Հրատ., 2015, էջ 189:

[29] Յովսէփ Եղիազարեան, «Կեչառիսի Վանքը եւ Նրա Վիմագիր Արձանագրութիւնները», *Էջմիածին Ամսագիր*, 1955:12, էջ 46, արձ. 38. նաեւ՝ Գանձակեցի, էջ 205. նաեւ՝ Գարեգին Յովսէփեան, *Խաղբակեանք Կամ Պռոշեանք Հայոց Պատմութեան Մէջ, Մասն Ա.*, Վաղարշապատ, 1928, էջ 78:

[30] Ա.Ի. Շահնազարեան, *Վահրամեանների Իշխանութիւնը*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1990, էջ 69, ծնթ.1:

[31] Նոյն, էջ 104-105:

[32] Հ.Ղեւոնդ Վ.Մ. Ալիշան, *Շիրակ, Տեղագրութիւն Պատրկերացոյց*, Վենետիկ, 1881, էջ 175: Ալիշանի կազմած Զաքարեանների տոհմածառի Սարգիս Բ. Մեծի դուստրերից առաջինի անունը գրուել է Թամթա: Այդ նոյն տոհմածառում սխալ է ներկայացուել նաեւ Դուփի ամուսնու անունը. Հասանի փոխարէն ամուսին է ներկայացուել Գրիգոր Խաչէնցին, որ Դուփի որդին էր:

[33] Գանձակեցի, էջ 166, 228, 292:

[34] *Հաւաքումն*, էջ 138:

[35] Պատրոն բառը տուեալ դէպքում կառավարչական գործունէութեամբ պայմանաւորուած լինելու արտայայտութիւն է:

[36] Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց, *Սփորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ Հինգ Գաւառացն Արարատայ*, աշխ.՝ Արմէն Տէր-Ստեփանեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատ., 2014, էջ 339:

[37] Խոշաքի «թագուհի» տիտղոսը հաստատում է մեր տեսակէտը, որ Զաքարէ Բ. Մեծի հիմնած պետութիւնը բացարձակ անկախ, սեփական թագաւորով պետութիւն էր եւ նրա տիրակալի կինը միաժամանակ ոչ միայն Հայք-Հայաստանի, այլեւ Վիրքի թագուհի էր իրեն անուանում:

[38] Ալիշան, *Շիրակ*, էջ 10:

[39] Նոյն. նաեւ՝ Ներսէս Սարգիսեան, *Տեղագրութիւն Ի Փոքր եւ Ի Մեծ Հայս*, Վենետիկ, 1864, էջ 170:

[40] Գանձակեցի, էջ 320:

[41] *Հաւաքումն*, էջ 140:

[42] Կարօ Ղաֆադարեան, *Յովհաննավանքը եւ Նրա Արձանագրութիւնները*, Երեւան, ՀՍՍՌ Հրատ., 1948, էջ 98:

[43] Ալիշան, «Զաքարեանների Տոհմածառ», *Շիրակ*, էջ 175:

[44] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 202. նաեւ՝ Տիգրան Հայազն, *Տիկնայք Փափկասունք Հայոց Աշխարհի, Կենսագրական Հանրագիտարան, Գիրք Առաջին*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2005, էջ 48-49:

[45] *Դիւան, Պրակ 9*, էջ 29, արձ. 5: Նոյնը վերաւիրագրուել է էջ 60, արձ. 67:

[46] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 173-174:

[47] Ալիշան, *Շիրակ*, էջ 24:

[48] Սամուէլ Կարապետեան, «Տեղեր», *Վարձք*, 2013:10, էջ 18-19:

[49] Մեր հաւաքածոյից:

[50] Մեզ Գագիկ Սարգսեանն է յայտնել:

[51] Մեր հաւաքածոյից:

[52] Իշխանական պաշտօնահամակարգում կողմնակալ-փոխարքայից յետոյ բարձրագոյն երկրորդ պաշտօնը կողմնակալութիւն-փոխարքայութիւններում:

[53] Ղաֆադարեան, *Յովհաննավանք*, էջ 94:

[54] *Դիւան, Պրակ 9*, էջ 63, արձանագրութիւն 73:
[55] Ղաֆադարեան, *Սանահին*, էջ 136:
[56] *Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, ԺԳ. Դար*, կազմ.՝ Ա.Ս.Մաթեւոսեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1984, էջ 211բ:
[57] Ղաֆադարեան, *Սանահին*, էջ 136:
[58] Գարեգին Յովսէփեան, *Խաղբակեանք Կամ Պռոշեանք Հայոց Պատմութեան Մէջ*, Բ. տիպ, Լիբանան, Անթիլիաս, 1969, էջ 314:
[59] Կարապետեան, էջ 18-19:
[60] Մեր հաւաքածոյից:
[61] Ղաֆադարեան, *Յովհաննավանք*, էջ 82-83:
[62] *Վիմական Տարեգիր*, կազմ.՝ Կարապետ Կոստանեանց, Պետերբուրգ, 1913, էջ 72:
[63] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 172-174:
[64] Ալիշան, *Շիրակ*, էջ 161:
[65] Մեր հաւաքածոյից:
[66] Մեր հաւաքածոյից:
[67] Ղաֆադարեան, *Սանահին*, էջ 134:
[68] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 174:
[69] Ղաֆադարեան, *Յովհաննավանքը*, էջ 94:
[70] Պետրոսեանց, *Վաչուրեաններ*, էջ 258:
[71] *Դիւան, Պրակ 9*, էջ 106, արձանագրութիւն 192:
[72] Պետրոսեանց, *Վաչուրեաններ*, էջ 258:
[73] Պետրոսեանց, *Գիւղն Որ Կոչի Վարդենիս Ի Նիգ Գաւառի*, Երեւան, 2018, 178 էջ:
[74] Նոյն, էջ 259:
[75] Նոյն, էջ 259-60:
[76] Նոյն, էջ 189 եւ յետոյ:
[77] Նոյն, էջ 260:
[78] Նոյն, էջ 261:
[79] Ղաֆադարեան, *Յովհաննավանքը*, էջ 95:
[80] Նոյն, էջ 81:
[81] Նոյն, էջ 91:
[82] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 282:
[83] Նոյն, էջ 366:
[84] Գանձակեցի, էջ 365 եւ յետոյ. նաեւ՝ Պետրոսեանց, *Գիւղն Որ Կոչի*, էջ 98:
[85] Գանձակեցի, էջ 370-371:
[86] Նոյն, էջ 371:
[87] Գ. Սարգսեան, «Բարձրաքաշ Վանքը եւ Նրա Արձանագրութիւնները», *Էջմիածին*, 1951:9-10, էջ 44. նաեւ՝ Ղաֆադարեան, *Յովհաննավանքը* էջ 84, 109:
[88] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 611. նաեւ՝ Տ.Մ. Պետրոսեանց (Տիգրան Հայազն), «Համազասպ Մամիկոնեան՝ Առաջնորդ Յովհաննավանքի», *Հոգեւոր Հայրենիք (Հայաստանի Ազգային Գրադարանի Ամսաթերթ)*, 2006:1/22/, էջ 4-5:
[89] Հ.Ղեւոնդ Ալիշան, *Այրարատ Բնաշխարհ Հայաստանեայց*, Վենետիկ, 1890, էջ 172:

[90] *Դիւան, Պրակ 5*, էջ 38, արձ. 82, էջ 41, արձ. 85:

[91] Նոյն, էջ 88, արձ. 268, էջ 116, արձ. 387, էջ 120, արձ. 400. նաեւ՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 3, Եղեգնաձորի եւ Ազիզբէկովի Շրջաններ*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1967, էջ 238, արձ. 779:

[92] *Դիւան, Պրակ 5*, էջ 15, արձ. 12:

[93] Նոյն, էջ 41, արձ. 84:

[94] Նոյն, էջ 40, արձ. 82:

[95] Նոյն, էջ 40, արձ. 82, էջ 80, արձ. 239, էջ 41, էջ 84:

[96] Գանձակեցի, էջ 391:

[97] Նոյն, էջ 270:

[98] Եղիազարեան, *Կեչառիսը*, էջ 48, արձանագրութիւն 57:

[99] Գանձակեցի, էջ 359:

[100] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 311-12:

[101] *Դիւան, Պրակ 5*, էջ 41, արձանագրութիւն 85:

[102] *Դիւան, Պրակ 3*, էջ 238, արձանագրութիւն 779:

[103] Դիդեբուլ էին կոչւում վրաց մեծ իշխանները:

[104] Մհեր Յակոբեան, *Հայ ժողովրդի Ռազմական Տարեգիրք, Գիրք Երեսունութերորդ, 1168-1198*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2008, էջ 39, ծանթ. 7:

[105] Հ.Ղեւոնդ Վ.Ալիշան, *Հայապատում, Հտր. Բ*, Վենետիկ, 1901, էջ 351:

[106] Գանձակեցի, էջ 207, նաեւ՝ Ալիշան, *Հայապատում*, էջ 350-51:

[107] Ուլուբաբեան, էջ 145 եւ յետոյ:

[108] Լեւոն Մելիքսէթ Բէկ, *«Կարդապետք Հայոց Հիւսիսային Կողմանց» եւ Նրանց Ինքնութիւնը. Հայ-Վրացական Յարաբերութիւններ (Պատմագրական Հետազօտութեան Փորձ)*, վրացերէնից թարգմ.՝ Հրաչ Բայրամեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատ., 2016, էջ 215-22:

[109] Խ. Թորոսեան, *«Թագաւորների Պատմութիւնն Ու Գովաբանութիւնը» Որպէս Զաքարեան Հայաստանի Պատմութեան Սկզբնաղբիւր*, Երեւան, ՀՀ ԳԱ Հրատ., 1992, էջ 371-72:

[110] Մխիթար Գօշ, *Գիրք Դատաստանի*, աշխ.՝ Խ.Թորոսեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1975:

[111] *Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Ե.-ԺԲ. Դարեր*, կազմ.՝ Ա.Ս.Մաթեւոսեան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1988, էջ 242:

[112] Հ.Ղ.Մ., «Յաղագս Իսկագիր եւ Նախագաղափար Օրինակի Գրոցն Դաստաստանի Մխիթարայ Գօշի», *Բազմավէպ*, 1848:Զ.(7), էջ 117:

[113] Գանձակեցի, էջ 215-216:

[114] *Դիւան, Պրակ 5*, էջ 198, արձանագրութիւն 708:

[115] Նոյն, էջ 198, արձանագրութիւն 708:

[116] Գանձակեցի, էջ 215:

[117] Նոյն:

[118] Տոհմի նախնական անունը Խաղբակեան է եղել: Կողմնակալ-փոխարքայ, իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանի որդի, իշխանաց իշխան Հասան-Պռոշի գործունէութեան արդիւնքում տոհմը նոր՝ Պռոշեան անուն է ստացել:

[119] Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 67 եւ յետոյ:

[120] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 182:
[121] Գորայքը Գորիսն է:
[122] Եղիազարեան, էջ 46, արձանագրութիւն 38:
[123] Նոյն, էջ 46:
[124] Նոյն, էջ 46:
[125] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 4, Գեղարքունիք*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1973, էջ 213, արձանագրութիւն 897:
[126] Գանձակեցի, էջ 205-206:
[127] Ստեփան Վարդապետ Մխիթարեան, *Սպորագրութիւն Այրիվանաց Ս. Գեղարդայ*, Վաղարշապատ, 1873, էջ 65:
[128] *Դիւան, Պրակ 5*, էջ 28, արձանագրութիւն 56:
[129] *Ղաֆադարեան, Յովհաննավանքը*, էջ 91:
[130] Արեւելքի պետութիւններում բարձրագոյն պաշտօն, որ Զաքարեան Հայաստանում եղել է թագաւորութեան եւ կողմնակալութիւն-փոխարքայութիւնների պալատներում: Պատմաբան Լ.Հ. Բաբայեանը գրել է, որ հեջուբը համազօր էր իշխանական արքունիքի վերակացուի՝ սենեկապետի պաշտօնին (*Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հրր. 3*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 553): Բուպակը պետական նախարար-հեջուբ-սենեկապետ էր (*Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական*, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 258): Զաքարէ Բ. շահնշահի հեջուբը Վահրամ Պահլաւունին էր (*Դիւան, Պրակ 10*, էջ 48, արձանագրութիւն 60), Իւանէ Ա. զօրավարի կողմնակալութեան հեջուբը Խաչէնի իշխանական տնից Գրիգոր Տղան էր (*Դիւան, Պրակ 6*, էջ 70, արձ. 140. նաեւ՝ Գանձակեցի, էջ 222-3, 254, 359), Այրարատի կողմնակալութեան կողմնակալ-փոխարքայ Վաչէ Ա.ի հեջուբը Ալվեցոյն էր (Ղաֆադարեան, *Յովհաննավանքը*, էջ 83):
[131] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 258:
[132] Համադան քաղաքը Պարսկաստանում:
[133] *Դիւան, Պրակ 3*, էջ 211, արձ. 677:
[134] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 261-262:
[135] Այս նոյն հերթականութեամբ Նորավանքի Կաթողիկէ եկեղեցու շինարարական արձանագրութեան մէջ իր որդիներին նշել է Լիպարիտ իշխանաց իշխանը (*Դիւան, Պրակ 3*, էջ 211, արձանագրութիւն 677):
[136] Նոյն, էջ 218, արձանագրութիւն 692:
[137] Նոյն, էջ 206, արձանագրութիւն 667:
[138] Նոյն, էջ 234, արձանագրութիւն 763, էջ 236, արձանագրութիւն 772:
[139] Նոյն, էջ 206, արձանագրութիւն 667:
[140] Նոյն, էջ 230, արձանագրութիւններ 736, 737, 738, 739:
[141] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 292
[142] Տ. Պետրոսեանց, *Վաչուրեաններ*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2001, էջ 56: Նոյնի՝ *Տիկնայք Փափկասուն*, էջ 42-43:
[143] *Դիւան, Պրակ 3*, էջ 227, արձանագրութիւն 727:
[144] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 266:
[145] Ալիշան, *Այրարատ*, էջ 340:
[146] *Դիւան, Պրակ 5*, էջ 16, արձանագրութիւն 14:

MATRIMONY AS A MEANS AND TOOL FOR STATE BUILDING FOR THE ZAKARIANS
(Summary)

TIGRAN PETROSYANTS
tigranhayazn@mail.ru

Matrimony has been an important tool for state building for thousands of years. Many interstate issues have been resolved and relations between ruling families have been regulated through wedlock.

The paper highlights how Sarkis Zakarian II (Sarkis the Great, son of King Zakare I, 1185-1187), one of the most renowned Armenian military and political figures of the 12th century, made good use of this institution in order to stitch together the territories of various Armenian feudal 'kings' and princes in a loose federation that was to become the foundation of Zakarid Armenia.

The author analyses the arranged marriages of Sarkis' two daughters to the main figures of the two branches of Khachen principality, and how later he arranged the marriage of his third daughter to the heir of the clan of Dsekh rulers, Hamazaspyans-Mamikonyans. Furthermore Sarkis had a role to play in the marriage of his nephew to the son of the Khachen princely house.

His two sons, Zakare II and Ivan II, followed in his footsteps and married their sister Vaneni-Nana to King Abbas II Kyurikyan, while they married representatives of other Armenian princely houses, and encouraged in every possible way the marriages of their subordinate princes to representatives of other princely houses.

The paper argues that this marital kinship united the territories of the Zakaryans and the Kyurikyans and combined the adjacent lands of the Artsrunis and those belonging to the rulers of Dsekh and laid the territorial foundation of the future Zakarid state. The success of this policy led the rulers of Armenia to adopt it for over one and a half centuries, during both Zakarid Armenia (1187-1236) and the semi-independent existence of Armenia under Mongol rule (1236-1350). Furthermore, it gave to a number of Armenian princely families the capacity to survive during those challenging decades for some five to six generations.